



**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾՐԱԳԻՐ**

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐ

**ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԶԵՌՆԱՐԿ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ԵՐԵՎԱՆ 2016

Ուսումնաստանողակ ձեռնարկը ստեղծվել է «Ժողովրդավարության և մարդու իրավունքի կրթությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի աջակցությամբ

Ուսումնաստանողակ ձեռնարկում օգտագործվել են նյութեր ԱՄՆ-ի Կալիֆորնիայի Քաղաքացիական կրթության կենտրոնի «Ժողովրդավարության հիմնարար արժեքներ. իշխանություն, մասնավոր կյանք, պատասխանատվություն, արդարություն» ձեռնարկից (“Foundations of Democracy- Authority, Privacy, Responsibility, Justice”, Center for Civic Education, 1993, 2005)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԴԱՍ 1. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ	2
2.	ԴԱՍ 2. ԻՆՉՈ՞Ւ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ	5
3.	ԴԱՍ 3. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ: ՄՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ.....	7
4.	ԴԱՍ 4. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	10
5.	ԴԱՍ 5. ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ ԲԱԽՎՈՂ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՄԻՋԵՎ.....	13
6.	ԴԱՍ 6. ԵՐԲ ԲԱԽՎՈՒՄ ԵՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	16
7.	ԴԱՍ 7. Ի՞ՆՉ Է ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ.....	17
8.	ԴԱՍ 8. ՈՐՈ՞ՒՔ ԵՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ ԵՎ ՎՆԱՍՆԵՐԸ.....	19
9.	ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	21
10.	ԴԱՍ 10. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՄԱՐԴԻԿ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻՆ	25
11.	ԴԱՍ 11. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ	30
12.	ԴԱՍ 12. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔՈՒՄ Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ Ի ՀԱՅՏ ԳԱԼ՝ ԿԱՊՎԱԾ ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ	37
13.	ԴԱՍ 13. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ Ի՞ՆՉ ԿՈՆՏԼԻԿՏՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ	41
14.	ԴԱՍ 14. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ ԽՍԲԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	47
15.	ԴԱՍ 15. Ի՞ՆՉ ՎՆԱՍ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋՆԹԱՅԸ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻՆ	51

ԴԱՍ 1. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Դասի նպատակն է իմանալ «իշխանություն» հասկացության բովանդակությունը: Ինչպես նաև բացահայտել, թե որն է «**իշխանություն**» և «**ուժ՝ առանց իշխանության**» հասկացությունների տարբերությունը:

Հաճախ ենք լսում՝ նա մեծ իշխանություն ունի կամ դուք այդպիսի իշխանություն չունեք: Ի՞նչ է նշանակում իշխանություն ունենալը: Ի՞նչ կերպար է մեր մտքում առաջանում, երբ լսում ենք *իշխանություն* բառը:

Իշխանության գլխավոր նպատակներից մեկը մարդկանց, հասարակական խմբերի միջև հարաբերությունների կարգավորումն է: Առաջին հերթին դրանք այն հարաբերություններն են, որոնք վերաբերում են մարդու կենսական կարիքների բավարարմանը:

Երբ խոսում ենք օրենքների և կանոնների մասին, մենք խոսում ենք միայն իշխանության մի տեսակի մասին: Փորձենք պատասխանել հարցերին.

- Արդյոք որևէ մեկը իրավունք ունի՞ ձեզ ասելու՝ ինչ անել և ինչը չանել:
- Իշխանությունը կապվա՞ծ է արդյոք օրենքների, այն կանոնների և այն մարդկանց հետ, ովքեր երբեմն իրավունք ունեն ձեզ ասելու՝ ինչ անել և ինչը՝ ոչ:

Օրինակ.

- Ձեր ծնողները իրավունք ունե՞ն ձեզ ասելու, թե որ ժամին պետք է տանը լինեք: Ինչու՞:

- Պետական լիազորված մարմինները իրավունք ունե՞ն ձեզ ասելու, որ դուք չեք կարող մեքենա վարել, եթե ձեր 18 տարին դեռ չի լրացել: Ինչու՞:

- Ոստիկանությունն իրավունք ունի՞ ձեզ ստիպել ենթարկվել մի օրենքի, որը դուք համարում եք սխալ: Ինչու՞:

Որպեսզի սկսենք ուսումնասիրել և վերլուծել այս թեման, նախ պետք է հասկանալ, թե ի՞նչ է **իշխանությունը**:

Քննադատական մտածողության վարժություն

Բացահայտենք ուժի և իշխանության միջև եղած տարբերությունը

Ընթերցանության նյութ՝ «**Վտանգավոր զբոսանք**»

Որոշ երկրների քաղաքների մետրոյում հանցագործությունը լուրջ խնդիր է: Հանցագործները երբեմն հարձակվում են անցորդների վրա, սպառնում են ուղևորներին, թալանում, կողոպտում նրանց:

Ներկայացնենք մի միջադեպ:

Ուշ երեկոյան երկու դեռահաս՝ մուգ գույնի հագուստով, իջնում են մետրո: Դեռահասներից մեկը բաճկոնի տակից հանում է ատրճանակը և սպառնալով մի տարեց գույզի՝ պահանջում է գումար և թանկարժեք իրեր:

Այդ պահին տարածքում շրջող ոստիկաններից մեկը դա նկատում է: Նա մոտենում հանցագործներին և դուրս հանելով իր ատրճանակը՝ բղավում. «Չշարժվե՛լ: Ցա՛ճ դրեք ձեր զենքերն ու ձեռքերը վե՛ր բարձրացրե՛ք»:

Հանցագործները ձերբակալվում են:

Ի՞նչ եք կարծում.

1. Ի՞նչ ընդհանրություն կար հանցագործների և ոստիկանի գործողությունների միջև:

2. Ո՞րն է նրանց գործողությունների միջև տարբերությունը:

3. Ովքե՞ր ուժ կիրառեցին: Նրանցից ո՞վ ուներ ուժ կիրառելու իրավունք և ո՞վ՝ չունեւ: Հիմնավորե՛ք ձեր պատասխանները:

Ի՞նչ է ուժը և ի՞նչ է իշխանությունը

Պատմությունը, որ կարդացինք, նկարագրում է ուժի և իշխանության տարբերությունը: Շատ կարևոր է հասկանալ այդ տարբերությունը:

- **Ուժը** այն կարողությունն է, որով կարող ես ղեկավարել կամ ուղղորդել ինչ-որ մեկին:

Երբեմն մարդիկ ունեն ուժ կիրառելու իրավունք և երբեմն էլ չունեն այն: Օրինակ՝ եթե քո դասընկերները ստիպում են քեզ անել մի բան, որը դու չես ցանկանում անել, նրանք ուժ են գործադրում, բայց չունեն պարտադրելու իրավունք, իսկ ոստիկանները, որոնք վերահսկում են երթևեկությունը, ունեն ն՛ ուժ, և՛ իրավունք այդպես վարվելու:

- **Իշխանությունը ուժի և իրավունքի** միասնությունն է, որի միջոցով գործի է դրվում ուժը:

Ուժ կիրառելու իրավունքը սովորաբար գալիս է ավանդույթներից (սովորույթներից), օրենքներից և բարոյական նորմերից:

Օրինակ՝

- Ձեր ծնողները իրավունք ունեն ձեզ պատժելու սխալ արարքի համար: Նրանք այդ ուժը գործադրելու իրավունքը ստանում են ավանդույթներից, օրենքներից և բարոյական սկզբունքներից:

- Ձեր ուսուցիչն իշխանություն ունի որոշելու, թե ինչպես դասավանդել առարկան, քանի որ օրենքը տալիս է նրան այդ իրավունքը:

- Ազգային ժողովն ունի օրենքներ ընդունելու իշխանություն, քանի որ Սահմանադրությունն է տալիս այդ ուժը և քաղաքացիները իրենց տված քվեով համաձայնվել են:

Բերեք նմանատիպ այլ օրինակներ:

Բացատրել իշխանության և առանց իշխանության՝ ուժի կիրառումը

Այս վարժությունը ձեզ հնարավորություն կտա բացահայտել իշխանության և առանց իշխանության՝ ուժի տարբերությունը:

Կարդացեք հետևյալ 9 իրավիճակները և պատասխանեք ստորև նշված հարցերին, պատրաստ եղեք մեկնաբանելու ձեր պատասխանները:

1. Դատավորը մեղավոր է ճանաչում չափահաս տղամարդուն գողության մեջ և նրան բանտարկելու վճիռ է կայացնում:

2. Աղջկա ծնողները բացակայում էին տնից և նրան թողել էին տանը՝ որպես պատասխանատու: Աղջիկը չէր թույլատրում իր կրտսեր եղբորը օգտվել համակարգչից:

3. Մրցավարը խաղից հեռացնում է 2 խաղացողների՝ խաղի ընթացքում կովելու պատճառով:

4. Տատիկն անընդհատ հիշում էր, որ իր հայրն առաջնորդում էր ընտանիքն՝ ասելով. «Ով աշխատի, նա կուտի»:

5. Ամրակազմ երիտասարդը խախտում է կինոթատրոնի տոմս գնողների հերթը և առաջ անցնում:

6. Տնօրենը սովորողի ձեռքից վերցնում է դանակը և հանձնում այն ոստիկաններին:

7. Քաղաքապետը մերժում է մի խումբ ուսանողների խնդրանքը, որոնք ցանկանում էին բողոքի ցույց կազմակերպել Ազատության հրապարակում:

8. Հայրն ասում է որդուն, որ նա կպատժվի մեկ շաբաթով, քանի որ չի մասնակցել դաշտային աշխատանքներին:

Իրավիճակների քննարկում

Փորձենք պատասխանել հարցերին.

- Վերը նշված իրավիճակներից որի՞ մեջ եք տեսնում իշխանության կիրառումը:
- Իրավիճակներից որի՞ մեջ եք տեսնում առանց իշխանության՝ ուժի կիրառումը:
- Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ է կարևոր տարբերել ուժը իշխանությունից:

Գործնական առաջադրանք.

1. «Իշխանություն» հասկացությունն ուսումնասիրելիս դուք պետք է ունենաք աշխատանքային տետր:

Փորձեք ներկայացնել երկու իրական կամ երևակայական իրավիճակներ: Առաջինը պետք է նկարագրի իշխանության կիրառման իրավիճակ, երկրորդը պետք է նկարագրի առանց իշխանության՝ ուժի դրսևորման իրավիճակ: Դուք կարող եք այն տեսանելի դարձնել նկարագրողումների կամ լուսանկարների միջոցով:

2. Օգտվելով լրատվական աղբյուրներից՝ առանձնացրեք երկու հոդված, որտեղ տեսանելի կլինի իշխանության և առանց իշխանության՝ ուժի կիրառումը:

ԴԱՍ 2. ԻՆՉՈ՞Ւ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դասի նպատակը

Դասի նպատակն է ուսումնասիրել իշխանության տարբեր դրսևորումներ, հասկանալ, թե ինչպես կարելի է օգտագործել իշխանությունը՝ առաջացած խնդիրները հաղթահարելու համար:

Ի՞նչ կլինեք, եթե գոյություն չունենար իշխանություն

Փորձենք մտաբերել այն բոլոր օրենքները, որոնց հետևում ենք ամեն օր, այնուհետև մտածենք իշխանություն ունեցող մարդկանց մասին, ովքեր հրահանգներ են տալիս մյուսներին:

Իսկ դուք երբևէ մտածե՞լ եք, թե ինչ կարող էր պատահել, եթե չլինեին օրենքներն ու դրանց կիրառումը վերահսկող մարդիկ: Ի՞նչ տեղի կունենար, եթե ոմանք սկսեին անսխառնություններ պատճառել: Ի՞նչ կլինեք, եթե աշխատանքները, որոնք պետք է անպայման կատարվեին, անուշադրության մատնվեին: Ո՞վ կհարթեր վեճերը կամ կպաշտպաներ մարդու իրավունքները: Ո՞վ կղեկավարեր կառավարությունը: Իսկ արդյոք կլինե՞ր կառավարություն:

Ի՞նչ եք կարծում:

Պատկերացրեք, որ մի առավոտ արթնանում եք և պարզում, որ իշխանություն չկա: Բոլոր կանոնները, օրենքները, ոստիկանությունը, դատարանը, ուսուցիչները, տնօրենները, կառավարության ղեկավարն ու անդամներն անհետացել են:

1. Ի՞նչ խնդիրներ կարող են առաջանալ:
2. Ումի՞ց և ինչպե՞ս կպաշտպանեք ձեր իրավունքները:
3. Կունենա՞ք արդյոք իրավունքներ:

Իշխանության դրսևորումների բացահայտում

Ստորև ներկայացված փոքրիկ հատվածը Մարկ Տվենի պատմվածքից է:

Տվենը գրում է մի ժամանակահատվածի մասին, երբ մարդիկ հաճախ իրենց ձեռքն էին վերցնում օրենքի կիրառումը: Այս հատվածը կարդալիս մտածենք, թե ինչ խնդիրներ են առաջացել իշխանության բացակայության պատճառով:

« ...Ասես թե սատանան նորից ներխուժել էր մեր քաղաք: Փողոցներում ատրճանակներ ու հրացաններ էին կրակում, դաշույններ փայլատակում, ինչպես հին ժամանակներում:

Երբ երկարատև խաղաղություն, դադար է լինում, մարդիկ շատ դանդաղ են իրենց ձեռքները թաթախում արյան մեջ, բայց հենց որ թաթախվում են, կրակոցներն ու դաշույնների ձայները չեն դադարում:

Անցած գիշեր Ջեք Ուիլյամսը սպանվեց, և հենց այդ նույն փողոցում Ուիլյամսի սպանությունից է՛լ ավելի արյունոտ սպանության ենք ականատես լինում: Պարզվում է, որ Թոմ Ռիդերը՝ Ուիլյամսի ընկերներից մեկը և Ջորջ Գամբերտը գրուցում էին նախորդ

գիշերվա սպանության մասին վերջինիս պատկանող մսի տաղավարում: Ռիդերն այդ պահին ասում էր, որ դա ընդամենը վախկոտություն է՝ դանակահարել մարդուն թիկունքից, գաղտագողի: Որոշ ժամանակ վիճաբանելուց հետո Գամբերտը հանում է դանակը և հարվածում Ռիդերի մեջքին:

Ռիդերին տանում են բժիշկ Ուենսի աշխատասենյակ, որտեղ նրա վերքերը մշակվում են ինչպես հարկն է: Ցավազրկող դեղի ազդեցության տակ Ռիդերը չէր զգում վերքերի ցավը:

Նա վեր կացավ և փողոց դուրս եկավ: Գնաց մսի տաղավար և թարմացրեց վեճը Գամբերտի հետ՝ սպառնալով սպանել նրան: Այս սպառնալիքներից հետո Գամբերտը դուրս եկավ, ինչ որ տեղից գտավ երկփողանի հրացանը, վերադարձավ տաղավար և երկու անգամ կրակեց Ռիդերի վրա: Բժիշկներն այլևս Ռիդերին ապրելու հույս չտվեցին: Դեպքի պահին մոտակայքում շատ մարդիկ կային: Ումանք, երբ տեսան, որ նա հրացանը պարզեց կրակելու, բարձրաձայն գոռացին. «Սպասի՛ր, մի՛ կրակիր»: Կրակոցից հետո փողոցը լի էր այդ թաղամասի բնակիչներով, նրանցից ոմանք ոգևորված ծիծաղում էին՝ հայտարարելով. «Ասես թե 60-ականների հին լավ ժամանակները լինեն... »:

Շշուկներ էին տարածվում քաղաքում, որ դա ամենը չէր, որ ևս 5–6 հոգի սպանվել են անցած գիշեր... »:

Քննարկում

1. Ինչպիսի՞ խնդիրներ առաջացան այս քաղաքում իշխանության բացակայության պատճառով:

2. Ի՞նչ էք կարծում՝ ինչպե՞ս պետք է իշխանությունը լուծեր այս խնդիրները:

➤ Նմանատիպ խնդիրներ ծագու՞մ են մեր հասարակության մեջ իշխանության բացակայության պատճառով:

➤ Ի՞նչ պետք է արվի, որ գերծ մնանք այսպիսի իրավիճակներից:

Իշխանությունը պետք է օգտագործվի կյանքի, ազատության և սեփականության մեր իրավունքները պաշտպանելու համար:

• Իշխանությունը պետք է ծառայի հասարակությանը՝ ապահովելու համար կարգ ու կանոն և անվտանգություն:

Օրինակ՝ թռիչքներ վերահսկողները կանխում են օդային պատահարները և ապահովում են ուղևորների անվտանգությունը (*բերել նմանատիպ այլ օրինակներ*):

• Իշխանությունը կարելի է օգտագործել հակամարտությունների խաղաղ և արդարացի լուծման նպատակով:

Օրինակ՝ մրցավարները վերահսկում են սպորտային խաղերը, լուծում հնարավոր վեճերը: Դատարանները լուծում են սեփականության իրավունքի և այլ բնույթի վիճելի հարցեր:

- Իշխանությունը կարելի է օգտագործել՝ պաշտպանելու մարդկանց իրավունքները և ազատությունները *(ուսումնասիրել Սահմանադրության համապատասխան հոդվածները)*:

- Իշխանությունը կարելի է օգտագործել՝ հավասարաչափ և արդար բաշխելու իրավունքներն ու պարտականությունները:

Օրինակ՝ օրենքը բոլոր երեխաներին տալիս է անվճար կրթություն ստանալու իրավունք: *(Բերել նմանատիպ այլ օրինակներ)*:

ԴԱՍ 3. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ: ՄՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ինչպե՞ս կարելի է գնահատել օրենքները և ղեկավար պաշտոնների հավակնող թեկնածուներին

Ցանկացած ժողովրդավարական երկրում, ինչպես գիտենք, քաղաքացիներն իրավունք ունեն մասնակցելու ընտրություններին:

Իշխանության մարմինները, իրենց գործառույթներով պայմանավորված, ունեն մարդկանց կյանքի վրա ազդելու և վերահսկելու մի շարք միջոցներ: Ուստի անհրաժեշտ է կարևորել ճիշտ ընտրություն կատարելու գործընթացը:

Հասարակության բոլոր ոլորտները կառավարվում են նորմերով և օրենքներով, հետևաբար կարևոր է գնահատել դրանք, հասկանալ, թե որ օրենքներն են լավ, որոնք պետք է փոփոխության ենթարկել և ինչու:

Փորձենք միասին ծանոթանալ մի շարք մտավոր գործիքների հետ, որոնք օգտակար կլինեն իշխանության մարմինների ընտրության ժամանակ կողմնորոշվելու համար: Այս գործիքները նաև կօգնեն գնահատել մարդկանց որակները, տարբերակել և բացատրել, թե ինչ պահանջներ են ներկայացվում իշխանության մարմիններում, կառավարության կազմում պաշտոն զբաղեցնել ցանկացողներին, թե ինչ որակներ պետք է ունենա պաշտոնատար անձը:

Ամեն անցնող օրվա վրա մեծ ազդեցություն են թողնում իշխանությունները, լիազորված անձինք, ում դեր է վերապահված վերահսկելու և կարգավորելու մեր կյանքը:

Օրինակ՝ ընտրված պաշտոնյաները և նրանց օգնականները դառնում են հանրային իշխանության ներկայացուցիչներ: Օրենքը լիազորություններ է տալիս այդ մարդկանց:

Նրանք, ովքեր կառավարելու որակներ ունեն, կարող են հեշտացնել և բարելավել մեր կյանքը, իսկ նրանք, ովքեր կառավարելու թույլ ունակություններ ունեն, կդժվարեցնեն և տհաճ կդարձնեն այն:

Իշխանության տարբեր պաշտոններ պահանջում են տարբեր մոտեցումներ, գիտելիքներ, հմտություններ, տաղանդ և լավ կառավարողին բնորոշ գծեր:

Երբ մարդկանց ընտրում ենք ինչ-որ պաշտոնի համար, կարևոր է հաշվի առնել, թե ինչ որակներ պետք է ունենա տվյալ մարդը այդ պաշտոնը լավ վարելու համար:

Ժողովրդավարական հասարակության մեջ քաղաքացիները պարբերաբար հնարավորություն են ունենում ուղղակիորեն մասնակցելու ընտրություններին և ընտրելու իրենց նախընտրած թեկնածուին:

Քննարկում

1. Որո՞նք են պաշտոնյային բնութագրող հատկանիշները, առավելությունները և սահմանափակումները:

2. Նախքան որևէ պաշտոնի համար ընտրություն կատարելը արդյոք անհրաժեշտ է հաշվի առնել այն ոլորտը, որտեղ պիտի գործունեություն ծավալի պաշտոնյան:

Նկարագրեք մի իրավիճակ, որտեղ պետք է որևէ ոլորտում այս կամ այն պաշտոնյայի ընտրություն կատարվի և պատասխանեք հետևյալ հարցերին.

- Ի՞նչ կարողություններ են հարկավոր տվյալ անձին այդ պաշտոնը վարելու համար:

- Ի՞նչ առավելություններ պետք է ունենա այդ պաշտոնը վարող անձը:

- Ի՞նչ սահմանափակումներ և արգելքներ կան այդ պաշտոնը վարող անձի համար:

Ի՞նչ մասնագիտական և մարդկային որակներ պետք է ունենա պաշտոնատար անձը:

- Համապատասխան գիտելիքներ և կարողություններ
- Արդար լինելու կարողություն
- Ազնվություն
- Խելացիություն
- Աշխատասիրություն
- Վստահելիություն
- Խիզախություն
- Համագործակցելու կարողություն
- Հարգանք իրավունքների և դրանք կրող մարդկանց նկատմամբ
- Նվիրվածություն
- Հավատարմություն... (շարունակել ցանկը)

Որո՞նք են ընտրվողի ուժեղ և թույլ կողմերը:

Յուրաքանչյուր թեկնածուի ուժեղ և թույլ կողմերը պետք է հաշվի առնել՝ ելնելով տվյալ պաշտոնի որակական պահանջներից:

Հիմնավորեք ձեր պատասխանները:

Ինչպե՞ս բացահայտել ղեկավար պաշտոնների համար պահանջվող անհրաժեշտ որակները

Իրավիճակ

Պատկերացրեք, որ դուք դպրոցի աշակերտական խորհրդի անդամ եք: Դուք աշակերտներին պետք է խորհուրդ տաք, որ աշակերտական դատարանում հանդես գան դատավորների դերում: Դատավորները պատասխանատու են լսելու և վճիռ կայացնելու այն սովորողների վերաբերյալ, ովքեր կարգապահական խախտումներ են կատարել դպրոցում:

Փոքր խմբերով աշխատեք հետևյալ աղյուսակի վրա: Աղյուսակի ձախ կողմի սյունակում կարդացեք սովորող դատավորի պարտականությունների, լիազորությունների, առավելությունների և սահմանափակումների մասին:

Աջ կողմի սյունակում թվարկեք այն որակները, որոնք, ըստ ձեզ, հարկավոր են դատավորին՝ այս պաշտոնը լավ վարելու համար: Ձեզ օգնելու համար տրված են օրինակներ:

Աշակերտ դատավորի պարտականությունները, լիազորությունները, առավելություններն ու սահմանափակումները	Աշակերտ դատավորի բնորոշ գծերը
Պարտականությունները – Աշակերտ դատավորն ունի պարտականություն. 1. Լսելու բոլոր ներկայացված փաստերը	Որպեսզի իրականացնի այս պարտականությունը, աշակերտ դատավորը պետք է ունենա՝ ա. Լսելու ունակություն բ. Լսածը ընդունելու, ընկալելու ունակություն
2. Հարցեր տալու մեղադրվող աշակերտին և վկաներին	
3. Կիրառելու դպրոցում սահմանված կանոնները	
Լիազորություններ – Աշակերտ դատավորը ունի իշխանություն 1. Պահանջելու մեղադրյալ աշակերտից ներկա	Այս լիազորությունները գործի դնելու համար աշակերտ դատավորը պետք է՝

գտնվել բոլոր դատական նիստերին	
2. Պահանջել վկաներից ներկա գտնվելու և վկայություն տալու	
3. Հաստատել կարգուկանոն դատական նիստի ընթացքում	
4. Նիստից հեռացնել անկառավարելի մարդկանց	
5. Որոշել պատժի տեսակը և ձևերը	
Առավելությունները – Աշակերտ դատավորն ունի հետևյալ առավելությունները. 1. Իրավունք ունի շեղվելու որոշակի դպրոցական պարտականություններից՝ դատավորի գործառույթներ իրականացնելու համար	Վստահելի լինելու համար դատավորը պետք է՝
2. Իրավունք ունի մասնավոր դատական լսումներ կատարել՝ առանց ուսուցիչների և վարչական աշխատողների ներկայության	
Սահմանափակումներ – Աշակերտ դատավորի սահմանափակումը հետևյալն է. 1. Ապահովել արդարություն օրենքի շրջանակներում	Այս սահմանափակումների շրջանակում մնալու համար աշակերտ դատավորը պետք է՝
2. Լինել անկողմնապահ	
3. Որոշում կայացնել՝ հիմնվելով փաստերի և դպրոցական կանոնների վրա	
4. Չերժ մնալ անարդար և անմիտ որոշումներ կայացնելուց	

ԴԱՍ 4. ՊՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դասի նպատակը

Այս դասի ժամանակ կքննարկեք, թե ինչ է պատասխանատվությունը և որոնք են պատասխանատվություն առաջացնող աղբյուրները: Մենք կուսումնասիրենք, թե պատասխանատվությունը ինչ կարևորություն ունի անհատների և հասարակության համար: Ինչպես նաև կքննարկեք, թե որոնք են պատասխանատվությունների կատարման առավելություններն ու թերությունները:

Ի՞նչ է պատասխանատվությունը

Պատասխանատվության խնդիրը առաջ է գալիս այն հասարակություններում, որոնցում կան ազատ անհատներ: Պատասխանատու լինել նշանակում է գիտակցել ու հիմնավորել սեփական գործողություններն ու դրանց հետևանքները:

Պատասխանատվությունն ի հայտ է գալիս երեխայի մեծանալուն զուգընթաց, երբ նա աստիճանաբար սկսում է կշռադատել իր արարքները, ինչպես նաև կանխատեսել դրանց հետևանքները: Յուրաքանչյուր իրավունք առաջ է բերում նաև պատասխանատվություն:

Պատասխանատվությունը սեփական արարքների համար հաշվետու (պատասխանատու) լինելն է:

Պատասխանատվության կարևորագույն աղբյուրն ազատությունն է: Սա նշանակում է, որ միայն ազատ մարդը կարող է պատասխանատու լինել, պատասխանատվությունը և ազատությունը ոչ թե հակադրություններ են, այլ նույն երևույթի տարբեր կողմերը:

Ընդհանրապես, պատասխանատվությունը ծագում է տարբեր հանգամանքներից, պատասխանատվության կարևոր աղբյուրներ են. խոստումը, հանձնարարությունը, օրենքը, սովորույթը, քաղաքացիությունը, բարոյական սկզբունքները և այլն: Հետևյալ օրինակները ցույց են տալիս, թե ինչ ձևով են մարդիկ ստանձնում պատասխանատվություններ:

1. Խոստում: Երբ մարդիկ խոստում են տալիս, դրանով նրանք պատասխանատվություն կամ պարտականություն են ստանձնում պահելու այդ խոստումը: Երբեմն այդ խոստումները նույնիսկ ունեն իրավական ուժ, այսինքն՝ իրենցից ներկայացնում են պայմանագիր: Դուք պետք է գիտակցեք, որ երբ խոստում եք տալիս, ապա դրանով համաձայնում եք կատարել այս կամ այն պարտականությունը:

ա) Բոբը իր ընկեր Քլիֆորդից վերցնում է 50\$, որպեսզի վճարի իր մեքենայի վերանորոգման համար: Նա խոստանում է վերադարձնել գումարը, երբ ստանա իր աշխատավարձը:

բ) Տեր և տիկին Մեյերները ստորագրել են բնակարանի վարձակալման մասին պայմանագիր բնակարանի սեփականատիրոջ հետ:

2. Հանձնարարություն: Երբեմն մարդիկ հանձնարարում կամ պարտականություններ են դնում այլ մարդկանց վրա:

ա) Պրն. Սմիթն իր դասարանին հանձնարարել է մինչև ուրբաթ կարդալ պատմվածքի առաջին մասը:

բ) Դպրոցի տնօրենը դպրոցական ճաշարանում կարգապահության վերահսկողության պատասխանատու է նշանակել պրն. Ռոդրիգեսին:

3. Նշանակում: Երբեմն մարդիկ ընտրվում կամ նշանակվում են պաշտոնների՝ կրելու որոշակի պատասխանատվություններ:

ա) Նրա հայրը նշանակվել էր նահանգի գերագույն դատարանի դատավոր:

բ) Մարզիչ Կաստանեդան տնօրենի կողմից նշանակվել է խմբի տեխնիկական հարցերով պատասխանատու:

4. Աշխատանք: Ցանկացած աշխատանք կամ զբաղվածություն ենթադրում է որոշակի պատասխանատվություններ:

ա) Որպես մեքենաների մասնագետ՝ ակնկալվում է, որ Հելլենը լավ կվերանորոգի մեքենաները:

բ) Դատավոր Հասթինգսը պատասխանատու է արդար հետաքննություն անցկացնելու, անկողմնակալ դատավարություն իրականացնելու և հանցագործներին, օրենքին համապատասխան, պատիժ սահմանելու համար:

5. Օրենք: Օրենքները պատասխանատվություններ են սահմանում հասարակության անդամների համար:

ա) Արմակադ ՄՊԸ-ն 2014 թվականին 58 միլիոն դրամից ավելի շրջանառություն է ունեցել և պարտավորվել է վճարել ավելացված արժեքի հարկ:

6. Ավանդույթ: Որոշ պատասխանատվություններ գալիս են ավանդույթներից կամ ստանդարտ կենսաձևից, որը ձևավորվում է երկար ժամանակի ընթացքում և որոնց հետևում են հասարակության անդամները:

ա) Ջոնը կանգնում է շարքի մեջ և համբերությամբ սպասում իր հերթին:

բ) Լորետան իր ընկերուհու ծննդյան երեկույթին նրան նվիրեց ձեռնոցներ:

7. Քաղաքացիություն: Մարդիկ ունեն նաև որոշակի պատասխանատվություններ, որովհետև նրանք այդ երկրի քաղաքացիներ են:

ա) Շերին մասնակցում է ընտրություններին, քանի որ դա իր քաղաքացիական պարտքն է:

բ) Կարլոսը հետևում է լուրերին և տեղեկացված է հասարակական ամենակարևոր հիմնախնդիրների մասին:

8. Բարոյական սկզբունքներ: Բարոյական սկզբունքները վարքի կանոններ են, որոնք հիմնված են ճիշտ/թույլատրելի և սխալ/անթույլատրելի սկզբունքների վրա:

ա) Մարդիկ պետք է իրար հարգալից վերաբերվեն:

բ) Բոլորի նկատմամբ պետք է արդար լինել:

Իսկ անձի համար ի՞նչ դժվարություններ կարող է առաջ բերել պատասխանատվությունը:

• *Ծանրաբեռնվածություն:* Պատասխանատվություն կրելը որոշակիորեն ծանրանում է մարդու ուսերին՝ ստիպելով նրան ներդնել ջանքեր, ժամանակ, միջոցներ և այլն:

• *Հարվածություն:* Պատասխանատվությունն առաջ է բերում լարվածություն: Մարդը մտածում է՝ արդյոք կկարողանա՞ ինչպես հարկն է իրականացնել այն:

• *Այլ հետաքրքրությունների գոհաբերում:* Երբեմն պատասխանատվություն իրականացնելու համար մարդը ստիպված է լինում հրաժարվել իր համար կարևոր որոշ արժեքներից և ցանկություններից:

• *Պատասխանատվության անարդարացի բաշխում:* Երբեմն խմբի որոշ անդամներ, խուսափելով իրենց պարտականությունները կատարելուց, պատասխանատվության իրենց բաժինը թողնում են այն անհատի վրա, ով ավելի պատասխանատու է և լավ է կատարում իր պարտականությունները:

Ի՞նչ է շահում կամ ի՞նչ առավելություններ կարող է ձեռք բերել պատասխանատու անձը

- *Ինքնավստահություն:* Իր պատասխանատվությունն ամբողջովին իրականացնող մարդը ձեռք է բերում վստահություն սեփական ուժերի հանդեպ:

- *Անկախություն:* Իր պարտականություններն ու պարտավորվածությունը բարեխղճորեն կատարող մարդուն հնարավորություն է տրվում գործելու նվազ վերահսկողության պայմաններում, քանի որ վերահսկվողները հասկանում են, որ տվյալ անհատը, որպես կանոն, իրականացնում է իր պատասխանատվությունը:

- *Բարի համբավ:* Իրենց պատասխանատվությունն իրականացնող անհատները ավելի են հարգվում և վստահության արժանանում հասարակության կողմից:

- *Կարգավիճակի և վարձատրության բարձրացում:* Իր պատասխանատվությունը լիովին իրականացնելով՝ անհատը կարող է արժանանալ ճանաչման, պարգևների, շնորհների, ինչպես նաև կարող է ստանալ կարգավիճակի և վարձատրության բարձրացման հնարավորություն:

- *Գիտելիքի, հմտության և փորձի ձեռքբերում:* Իր պատասխանատվությունն իրականացնելը հնարավորություն է տալիս մարդուն ձեռք բերել նոր գիտելիքներ, հմտություններ և արժեքավոր փորձ:

ԴԱՍ 5. ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ ԲԱԽՎՈՂ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՄԻՋԵՎ

Դասի նպատակը

Այս դասին դուք կուսումնասիրեք իրավիճակներ, որոնցում մարդիկ պետք է որոշում ընդունեն բախվող պարտականությունների, արժեքների և շահերի միջև:

Սովորելով այս դասը, դուք կփորձեք արժևորել (գնահատել) այն իրադրությունները, որոնցում ընտրությունները պետք է կատարվեն բախվող պարտականությունների, շահերի և արժեքների միջև: Ինչպես նաև կկարողանաք նման իրավիճակներում դիրքորոշում ունենալ և պաշտպանել այն:

Ինչպիսի՞ բախումներ կարող են ծագել պատասխանատվությունն իրականացնելիս

Մեր պատասխանատվությունն իրականացնելիս ընտրություն կատարելու ժամանակ կարող են ծագել հետևյալ բախումները.

1. Որոշ իրավիճակներ, երբ երկու պարտականություններ կոնֆլիկտի մեջ են, և հնարավոր չէ դրանք երկուսն էլ իրականացնել, համենայն դեպս՝ ոչ միաժամանակ:

2. Այլ իրավիճակներ, երբ կոնֆլիկտ կա պարտականությունների, այլ արժեքների և շահերի միջև:

Քննադատական մտածողության հետևյալ վարժանքում դուք կուսումնասիրեք նմանատիպ իրավիճակներ:

Բախվող պարտականությունների, արժեքների և շահերի ուսումնասիրությունը

Արժեքն այն է, ինչը դուք համարում եք ուշադրության արժանի և կարևոր, որը ճիշտ է կամ լավ և որին դուք պետք է փորձեք հասնել: Օրինակ՝ ազնվությունն արժեք է: Այդպիսի հատկանիշներ են բարությունը, քաջությունը, ընկերությունը, հավատարմությունը, գաղտնապահությունը, ազատությունը և արդարությունը:

Շահն այն է, ինչը դուք ցանկանում եք կամ որի մասին մտահոգված եք, ինչպես ազատ ժամանակը, լավ առողջությունը կամ պարզևատրումը:

Երբեմն որևէ պատասխանատվություն իրականացնելիս դուք ստիպված եք լինում գոհաբերել ձեր արժեքներից մեկը կամ կարող եք որոշել ընդհանրապես չիրականացնել պատասխանատվությունը, որովհետև մեկ այլ արժեք կամ շահ ավելի կարևոր է ձեզ համար:

Կարդացեք հետևյալ պատմություններն ու այնուհետև պատասխանեք հարցերին:

1. Անցյալ շաբաթ Գոհարի ուսուցիչը դասարանին տնային աշխատանք հանձնարարեց, որը պետք է հանձնվեր հաջորդ ուրբաթ: Գոհարը հետաձգեց հանձնարարության կատարումը մինչև ժամկետի նախորդ օրը: Մինչև հինգշաբթի նա ոչինչ չարեց, բայց հանձնարարությունն այնպիսին էր, որ Գոհարը ստիպված պիտի լիներ աշխատել գրադարանում: Որպեսզի նա կարողանար ավարտել հանձնարարությունը, պետք է հինգշաբթի օրվա ամբողջ կեսօրը և երեկոն աշխատեր գրադարանում: Հինգշաբթի առավոտյան վոլեյբոլի մարզիչը հայտարարեց, որ վոլեյբոլի թիմը պետք է դասերից հետո մնա պարապմունքի: Գոհարը չգիտեր՝ ինչ անել: Նա թիմի ավագն էր, և պարապմունքը հաջող անցկացնելու հույսն իր վրա էր:

2. Մայրիկը Արմանին գումար էր տվել պարապմունքից հետո տուն վերադառնալիս սնունդ գնելու համար ու խստորեն պատվիրել էր այլ նպատակներով այդ գումարը չօգտագործել: Սակայն պարապմունքի ժամանակ Արմանի ընկերը վնասվածք ստացավ, ու նրան պետք էր տաքսիով տեղափոխել հիվանդանոց: Արմանը զանգում էր մայրիկին, որպեսզի տեղեկացնի, որ երեկոյան ընթրիքի համար սնունդ գնելու փոխարեն ցանկանում է վճարել տաքսու գումարը, բայց մայրիկը հեռախոսազանգին չէր պատասխանում:

Բախվող պարտականությունների, արժեքների և շահերի որոշում

1. Ի՞նչ պարտականությունների կատարման մասին են մտածում Գոհարն ու Արմանը յուրաքանչյուր իրադրությունում:

2. Ի՞նչ պարտականություններ են կոնֆլիկտի մեջ այս իրավիճակներում: Ի՞նչ արժեքներ և շահեր են կոնֆլիկտի մեջ:

3. Դուք ի՞նչ որոշում կկայացնեիք: Ինչո՞ւ:

Բաշխման նյութ

	Պատասխանատվություն 1.	Պատասխանատվություն 2.
Ի՞նչ պատասխանատվություններ ես ունեմ:		
Որո՞նք են իրականացման ռեսուրսները:		
Որո՞նք են դրանց իրականացման դիմաց նախատեսված պարգևատրումները:		
Որո՞նք են դրանք չկատարելու դեպքում սահմանված տույժերը:		
Ի՞նչ շահ ունեմ դրանք կատարելու դեպքում:		
Ի՞նչ գին է պահանջվում դրանք կատարելու համար:		
Որքա՞ն հրատապ են դրանք:		
Ի՞նչ որոշում եմ ուզում կայացնել:		
Ի՞նչ ժամանակ է պահանջում դրանց կատարումը:		
Ի՞նչ այլ արժեքներ կամ հետաքրքրություններ են ներառված:		
Այլընտրանքային ի՞նչ լուծումներ են հնարավոր:		

ԴԱՍ 6. ԵՐԲ ԲԱԽՎՈՒՄ ԵՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարդացեք ստորև բերված պատմությունը, հետո աշխատեք գույգերով՝ պատասխանելով դասի վերջում տրված հարցերին:

«Արտակարգ պատահար»

Շատ բժիշկների նման Ջեյն Գրինն էլ Հիպոկրատի երդում էր տվել: Նա խոստացել էր. «Հետևել բուժման մեթոդին, ըստ իմ կարողության և առողջ դատողության՝ մտածել և գործել իմ հիվանդների օգտին»: Ջեյնն իր աշխատավայրում՝ Քաունթի հիվանդանոցում, շատ լրջորեն էր հետևում իր տված Հիպոկրատի երդմանը:

Մի գիշեր բժիշկ Գրինը հերթապահ էր շտապօգնության բաժանմունքում, երբ հիվանդանոց բերեցին մի տղամարդու, որին մեքենա էր հարվածել: Տղամարդը անգիտակից վիճակում էր: Մինչ բժիշկ Գրինը զննում էր տղամարդուն, օգնականը ստուգեց տղամարդու դրամապանակը՝ ինքնությունը պարզելու նպատակով:

Օգնականը դրամապանակում գտավ մի քարտ՝ հետևյալ գրությամբ. «Ռոբերտ Հոլբրուկի վնասվելու դեպքում խնդրում ենք զանգահարել նրա եկեղեցի /899/ 132 – 5412: Բժշկական օգնություն չցուցաբերել»:

Քարտի ներքևում Ռոբերտ Հոլբրուկի ստորագրությունն էր, այն նույնանում էր վարորդական իրավունքի ստորագրությանը:

Օգնականը քարտը ցույց տվեց բժիշկ Գրինին: Բժիշկն ասաց. «Նա ներքին արնահոսություն ունի: Եթե մենք շտապ չվիրահատենք, նա կարող է մահանալ»: Օգնականը հիշեցրեց բժշկին, որ տղամարդը ստորագրել էր քարտի վրա: «Եթե նա գիտակից լիներ, մեզ կասեր, որ վիրահատություն չի ուզում: Մարդիկ, ովքեր պատկանում են նրա եկեղեցուն, կարծում են, որ բժշկական օգնությունը բախվում է (խանգարում է) հոգևոր բուժմանը»:

«Իմ պարտքն է անել այն, ինչ ես կարծում եմ ամենալավն է իմ հիվանդների համար: Պատրաստեք վիրահատության», – պատասխանեց Ջեյնը:

Մինչ օգնականը Ռոբերտին դուրս տարավ սենյակից, բժիշկ Գրինը նորից նայեց քարտին: Նա մտածեց՝ իսկ եթե հետևի այս պահանջի՞ն:

Իր բժշկական կարիերայում առաջին անգամն էր, երբ նա վստահ չէր, թե որն է խելամիտ:

Քննարկեք իրավիճակը

1. Որտե՞ս են բժշկի պարտականությունները այս իրավիճակում:
2. Որտե՞ս են այդ պարտականությունների աղբյուրները:
3. Ի՞նչ պարզվեց կարող են լինել պարտականությունները իրականացնելիս: Ի՞նչ վնասներ, հատուցումներ կարող են առաջ գալ պարտականությունները չիրականացնելիս:
4. Որոնք են հնարավոր հետևանքները:
5. Ինչքա՞ն կարևոր է յուրաքանչյուր պարտականություն:
6. Ինչքա՞ն ժամանակ կպահանջվի կատարելու յուրաքանչյուր պարտականություն:

7. Ի՞նչ ռեսուրսներ կպահանջվի կատարելու յուրաքանչյուր պարտականություն:
8. Ի՞նչ այլ արժեքներ կամ շահեր են արձարծված, շոշափված:
9. Ի՞նչ այլընտրանքային լուծումներ են հնարավոր:
10. Ի՞նչ էք կարծում՝ ի՞նչ պետք է աներ բժիշկ Գրիոր: Ինչո՞ւ:

Տնային հանձնարարություն

Ներկայացրեք նմանատիպ իրավիճակներ, երբ բախվում են պարտականությունները:

ԴԱՍ 7. ԻՆՉ Է ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դասի նպատակը

Այս դասի ընթացքում սովորողները պետք է կարողանան տարբերել, թե որ իրավիճակներն են վերաբերում մասնավոր կյանքին և որոնք՝ ոչ, ինչպես նաև հիմնավորել, թե ինչու մարդիկ մասնավոր կյանքի իրավունքի կարիք ունեն:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը նշանակում է «մենակ լինել կարողանալու կամ մենակ մնալու» իրավունք: Իսկ սովորաբար ե՞րբ ենք մենք ուզում, որ մեզ մենակ թողնեն: Կարող ենք թվարկել մի շարք իրավիճակներ (երբ մեզ ձանձրացնում են, մեզ խանգարում են և այլն):

Այսպիսով, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ներառում է.

- Իրավունք՝ որոշելու, թե որ տեղեկություններն ենք ցանկանում կիսել ուրիշների հետ և որոնք՝ ոչ:

- Առանձին, մենակ մնալու իրավունք:

- Ուրիշ մարդկանց միջամտություններից պաշտպանված լինելու իրավունք:

Ի՞նչ էք կարծում՝ մարդիկ իրենց վերաբերող ո՞ր տեղեկություններն են հաճախ ցանկանում անհասանելի դարձնել այլ մարդկանց համար:

Դրանք կարող են լինել ստորև թվարկվածները.

1. **Փաստերը**, օրինակ, երբ ես ծնվել, ովքեր են քո ծնողները և այլն:

2. **Քայլերը**, օրինակ, ուր ենք գնում, ում ենք հանդիպելու և այլն:

3. Անձնական տարածքները և իրերը, օրինակ, սենյակը, բջջային հեռախոսը, արկղերն ու դարակները և այլն:

4. Մտքերն ու զգացմունքները, օրինակ, ում ենք սիրում կամ չենք հավանում, ինչից ենք վախենում և այլն:

5. Հաղորդակցությունները, օրինակ, նամակները, հաղորդագրությունները, հեռախոսային զրույցները:

Քննադատական մտածողության առաջադրանք

Ստորև թվարկվածներից որոշե՛ք, թե որ իրավիճակներն են վերաբերում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին և որոնք՝ ոչ: Այնուհետև պատասխանեք տրված հարցերին և քննարկեք ձեր պատասխանները դասարանում:

Իրավիճակներ

1. Դավիթը գնաց իր սենյակ՝ ընկերուհու հետ հեռախոսագրույց ունենալու համար, քանի որ չէր ցանկանում, որ քույրը լսի իրենց զրույցը:

2. Երբեմն Սոնան բարձրանում է իրենց շենքի տանիք, որպեսզի մենակ մնա, իսկ հետո պարապի իր կիթառի դասերը: Նա չի ուզում, որ մյուսները լսեն, թե ինչպես է փորձում սովորել:

3. Արսենը մտավ դասասենյակ և բոլորի մոտ հայտարարեց, որ այսօր Չեմպիոնների լիգայի եզրափակիչ խաղն է:

4. Աննան և Հայարփին ընկերուհիներ են արդեն երեք տարի և նրանք ունեն իրենց մշտական հանդիպման տեղը դպրոցի մոտակա այգում:

5. Սահակն ու Հայկը մտել էին մի հին քարանձավ: Հանկարծ քարանձավից մի կտոր պոկվեց և փակեց դուրս գալու ճանապարհը: Նրանք մենակ մնացին քարանձավում:

6. Երբ Լալան իմացավ իր ստուգողական աշխատանքի գնահատականը Հասարակագիտություն առարկայից, այն գաղտնի պահեց իր համադասարանցիներից ու ընկերներից:

7. Չնայած Չոհրաբը նախագահական ընտրությունների ժամանակ պաշտպանում էր «պահպանողական» կուսակցության թեկնածուին, սակայն աշխատանքի վայրում նա այդ մասին չբարձրաձայնեց:

Հարցեր

1. Ինչն է այդ իրավիճակը մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին առնչվող օրինակ:

2. Ինչն է են ցանկանում որևէ իրավիճակում ինչ-որ բան գաղտնի պահել:

3. Ո՞ւմից են ցանկանում գաղտնի պահել:

4. Ինչն է են մարդիկ ցանկանում ունենալ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք:

Տնային առաջադրանք

1. Փորձեք գտնել և դասընկերներին ներկայացնել լրագրողական մի հրապարակում, որը լուսաբանում է մասնավոր կյանքի իրավունքին վերաբերող իրավիճակ:

2. Փորձեք գրել սովորողների մասնավոր կյանքի իրավունքին վերաբերող մի քանի կանոններ, որոնք կցանկանայիք, որ դպրոցում բոլորը պահպանեին:

ԴԱՍ 8. ՈՐՈ՛ՒՔ ԵՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՑԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ ԵՎ ՎՆԱՄՆԵՐԸ

Դասի նպատակը

Այս դասի ընթացքում սովորողները կհիմանան, թե որոնք են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի դրսևորման հետևանքները՝ օգուտներն ու վնասները: Նրանք կկարողանան կոնկրետ իրավիճակների համար որոշում կայացնել՝ հիմնվելով հետևանքների վերլուծության վրա:

Ամեն անգամ, երբ մենք փորձում ենք պահպանել մեր մասնավոր կյանքի անձեռնմխելիության (գաղտնիության) իրավունքը, արդյունքում դա մեզ համար կարող է ն՝ օգտակար լինել, և՛ վնասակար: Հետևաբար, նախօրոք պետք է մտածենք և որոշում կայացնենք, թե արդյոք արժե պահպանել մեր այդ իրավունքը:

Ստորև ներկայացնում ենք իրավիճակներ: Ի՞նչ էք կարծում, որո՞նք են այդ իրավիճակներում մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվության գաղտնիության պահպանման իրավունքները: Որո՞նք են այդ իրավունքի առավելությունները և որոնք՝ թերությունները:

1. Դպրոցում պարտադրվում է պարբերաբար հավաքել և պահպանել աշակերտների մասին արված գրառումները: Այդ գրառումները կատարում են ուսուցիչները, դրանք ուսուցիչների մեկնաբանություններն են աշակերտների ուսումնառության և վարքի մասին: Այդ գրառումները պահպանվում են դպրոցի տնօրենի սենյակում: Դրանք կարող են կարգալ միայն տնօրենը, վարչական աշխատակիցները, ուսուցիչներն ու աշակերտների ծնողները:

2. Կան պետություններ, որտեղ օրենսդրությունն արգելում է, որ փաստաբանը բացահայտի, թե ինչ է իրեն ասել պաշտպանյալը մասնավոր գրույցի ընթացքում:

3. Երբ Անժելայի պապիկը մահացավ, նա լաց էր լինում, սակայն միայն տանը: Դպրոցում նա թույլ չէր տալիս, որ իր զգացմունքները նկատելի լինեն: Երբ մի անգամ ընկերներից մեկը հարցրեց, թե ինչն է անհանգստացնում նրան և ինչու է նա մտահոգ, նա միայն թափահարեց գլուխը և ոչինչ չպատասխանեց:

Իսկ հիմա փորձենք պարզել, թե որոնք են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրականացման առավելությունները:

ա) Ազատություն: Մարդիկ պետք է ազատ լինեն մտածելու և վարվելու ըստ իրենց նախասիրությունների՝ առանց արտաքին ազդեցությունների: Սա օգնում է հասարակությանը խուսափել ամբողջատիրությունից: Մարդիկ իրենց տան մեջ պետք է ազատ լինեն հարազատների և ընկերների հետ խոսելու իրենց համոզմունքների, նախասիրությունների և այլնի մասին:

բ) Անհատականություն: Առանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի՝ մարդիկ չէին կարողանա բացահայտել իրենց, քանի որ հնարավորություն չեն ունենա ձևավորելու իրենց ներաշխարհն ու ինքնությունը

գ) Անձնական հարաբերություններ: Առանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի՝ մարդիկ չեն կարողանա ձևավորել ջերմ և մտերիմ հարաբերություններ այլոց հետ: Մարդիկ իրենց զգացմունքներն ու վերաբերմունքը հիմնականում դժվարանում են արտահայտել հանրային վայրերում:

դ) Ստեղծագործելու համար: Մասնավոր կյանքը կարևոր է ստեղծագործելու համար: Օրինակ, երբ ինչ-որ մեկը զբաղված է պատմվածք գրելով, նրան հաստատ դուր չի գա, որ մեկ ուրիշը ժամանակ առ ժամանակ նայի թիկունքից.:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրականացման թերություններն են.

- **միայնությունը**, քանի որ մասնավոր կյանքի գաղտնիության մեծ չափաբաժինը մարդկանց օտարում է մյուսներից,

- **ապօրինություն**, քանի որ այն վայրերը, որոնք մասնավոր սեփականություն են, այնքան էլ հեշտ չէ մուտք գործել, (օրինակ, ուստիկանները բնակարան մուտք գործելու և խուզարկելու համար պետք է ունենան դատարանի որոշում),

- **գարգացման կորուստ**, սովորաբար մարդիկ սովորում են և իրենց սխալներն ուղղում այլ մարդկանց հետ համագործակցության, հաղորդակցության և քննարկումների միջոցով, հետևաբար, եթե մարդը չի կիսվում իր մտահոգություններով, նա կորցնում է ուրիշներից սովորելու հնարավորությունը,

- **Ֆինանսական ծախսը**, մասնավոր կյանքի համար, ինչպես գիտենք, մարդիկ պետք է ունենան իրենց առանձին անկյունը, իսկ դա ենթադրում է լրացուցիչ ծախսեր:

Քննադատական մտածողության առաջադրանք

Այժմ գույգերով քննարկեք հետևյալ հարցերը:

1. Կարո՞ղ է մասնավոր կյանքի կարևորության և գաղտնիության չափազանցումը խանգարել մարդու գործունեությանը:

2. Արդյոք մասնավոր կյանքի իրավունքը դժվարացնո՞ւմ է սեփական արարքների հանդեպ պատասխանատվությունը:

3. Արդյոք մասնավոր կյանքի գաղտնիությունը նպաստո՞ւմ է, որ մարդիկ կարողանան ընկերություն անել:

4. Ինչպե՞ս քեզ կզգաս, եթե մյուսները չհարգեն քո առանձնանալու և միայնակ մնալու ցանկությունը:

ԴԱՍ 9. ՄԱՄՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասի նպատակը

Այս դասը ձեզ հնարավորություն կտա ծանոթանալ այն գործոնների հետ, որոնք բացատրում են անհատների վարքագծերի միջև տարբերությունները: Դուք կսովորեք, որ թեև մասնավոր կյանքը գոյություն ունի բոլոր մշակույթներում, սակայն հաճախ դրանք տարբերվում են նույնիսկ մեկ մշակույթի ներսում: Երբ ավարտեք այս դասը, դուք կկարողանաք նկարագրել և բացատրել մարդկանց մասնավոր կյանքի նմանություններն ու տարբերությունները:

Ի՞նչ գործոններ են ազդում վարքագծի վրա:

Մարդիկ տարբեր բաներ են ցանկանում անհասանելի դարձնել ուրիշների համար, և նրանք դա անում են տարբեր կերպ. հենց սրանով էլ մարդիկ տարբերվում են միմյանցից: Ի՞նչը կարող է բացատրել այս տարբերությունները: Ահա մի քանի գործոններ, որոնք անմիջապես ազդում են վարքագծի վրա.

1. Ընտանիքը. մարդու ընտանեկան միջավայրը կարող է նպաստել վերջինիս վարքագծի վրա: Օրինակ.

- Անիեճ ընտանիքում ոչ ոք երբեք չի հիշատակում քեռի Արմենի մասին, քանի որ նա մի քանի անգամ բախվել է օրենքի հետ և որոշ ժամանակ գտնվել կալանքի տակ:

- Բեյլան իր ծնողների և 6 եղբայրների հետ միասին ապրում է երկու սենյականոց բնակարանում: Բեյլան սիրում է նկարել: Սակայն երբեմն նա դժվարանում է աշխատել, քանի որ իր ընտանիքի անդամները միշտ շրջակայքում են: Այս պատճառով էլ նա հաճախ գնում է այգի և այնտեղ նկարում: Նա երազում է այն մասին, երբ կունենա իր սեփական սենյակը, որտեղ միայնակ կլինի և կկարողանա նկարել որքան ուզում է:

- **2. Զբաղվածությունը կամ պաշտոնը.** մարդու աշխատանքը կամ նրա դիրքը կարող է պահանջել գաղտնիության պահպանում: Օրինակ. Մայքը դեռ երեխա ժամանակից հեռուստատեսային աստղ էր, երբ նա խաղում էր Փոքրիկ Լուիի դերը «Դեյվը գնում է քուլեջ» հեռուստասերիալում: Որքան նա մեծանում էր, այնքան դժվարանում էր խաղալ երիտասարդ մարդկանց դերեր: Այդ իսկ պատճառով էլ նա չի ցանկանում, որպեսզի մարդիկ իմանան իր իրական տարիքը: Նա ցանկանում էր, որ մարդիկ կարծեն, թե ինքն իրականում ավելի երիտասարդ է:

- Սառան աշխատում է Անվտանգության բաժնի ամենից գաղտնի ծրագրերի վրա: Նա չի կարող քննարկել իր աշխատանքը ոչ մեկի հետ:

3. Անհատական փորձը. անցյալում ունեցած փորձը կարող է ազդել մարդու մասնավոր կյանքի իրավունքի վրա: Օրինակ.

- Մարտինը պարզապես ապշեց , երբ իր ընկերը, որին ինքը վստահում էր, ամբողջ դասարանի մոտ բարձրաձայնեց, որ ինքը սիրահարված է Լիլիթին: Մարտինը այժմ գրեթե երբեք չի կիսվում իր զգացմունքներով նույնիսկ ամենամոտ ընկերների հետ:

- Մարիամենց ընտանիքում խնդիրները հիմնականում քննարկվում էին բոլորի ներկայությամբ: Երբ նա դարձավ չափահաս, շատ քիչ հարցեր կային, որոնք նա չէր քննարկում իր ընկերների հետ:

- Արաքսը մեծացել էր փոքրիկ ազարակում: Ամենամոտ հարևանը ապրում էր մոտ 2 կիլոմետր հեռավորության վրա, իսկ մեքենայով շուրջ կես ժամվա ճանապարհ էր մինչև մոտակա քաղաքը: Նա սիրում էր ապրել այնտեղ և իր ընտանիքի հետ միայնակ լինել: Ազատ ժամանակ Արաքսն աշխատում էր իր համակարգչով: Նա գրեթե մասնագետ էր դարձել: Երբ նա լսեց Չիկագոյում աշխատանքի հնարավորությունների մասին, որոշեց տեղափոխվել ավելի մեծ քաղաք: Նա աշխատանքի անցավ մեծ ընկերությունում և իր գործը շատ լավ էր անում: Նա առաջ էր գնում իր աշխատանքի մեջ՝ զբաղեցնելով ավելի ու ավելի պատասխանատու և լավ վարձատրվող պաշտոններ: Բայց Արաքսը երբեք չհամակերպվեց մարդաշատությանը և քաղաքի աղմուկին: Բավական երկար մտածելուց հետո նա որոշեց թողնել աշխատանքը և վերադառնալ ծնողների մոտ՝ ազարակ, որտեղ նա և իր ընտանիքը կարող էին ապրել առանց նվազագույն անհանգստության:

- Իր «1984» ստեղծագործության մեջ Ջորջ Օրուելը նկարագրում է մի հասարակություն, որտեղ յուրաքանչյուր տուն ուներ հատուկ հեռուստատեսային էկրան: Այդ էկրանի միջոցով երկրի կառավարությունը կարողանում էր տեսնել և լսել այն ամենը, ինչ մարդիկ անում էին իրենց բնակարաններում: Գլխավոր հերոսը՝ Ուիլսոն Սմիթը գտավ մի փոքրիկ սենյակ ինչ-որ խանութի վերևում, որտեղ հեռուստաէկրան չկար: Թեև այն փոքր էր և անհարմար, Ուիլսոնի համար այն կարծես դրախտ լինեք:

5. Մասնավոր կյանքին տրվող արժեքը. մարդկանց վարքագիծը կարող է տարբերվել՝ կախված նրանից, թե իրենք, իրենց ընտանիքը կամ մշակույթը ինչքանով են արժևորում իրենց մասնավոր կյանքի իրավունքը: Օրինակ.

- Միջնադարյան Եվրոպայում մարդիկ հոգում էին իրենց բնական կարիքները «փողոցի մյուս կողմում» և չէին անհանգստանում այն հանգամանքից, որ ուրիշները կարող են նկատել իրենց:

- Մահմեդական որոշ երկրներում կանայք հատուկ հագուստ են կրում, որով ծածկում են իրենց դեմքը և մարմինը՝ դա համարելով իրենց մասնավոր կյանքի մաս:

6. Համեմատելով արժեքները. թեև մարդիկ կարող են արժևորել իրենց մասնավոր կյանքը, երբեմն որոշակի գործոններ, առանձին վերցրած իրավիճակներում, կարող են ավելի կարևոր լինել: Օրինակ.

- «Թում Սոյերի արկածները» ստեղծագործության մեջ Թում Սոյերը մտածում է՝ արդյոք ինքը պե՞տք է դատարանում վկայություն տա Մաֆ Փոթերին սպանության մեջ մեղադրելու գործում թե՞ ոչ, թեև խոստացել էր Հաք Ֆիննին, որ երբեք և ոչ ոքի չի պատմի, թե իրենք ինչ են տեսել: Թումը ցանկանում էր այդ տեղեկությունը գաղտնի պահել, սակայն նա որոշում է, որ ավելի կարևոր է փրկել Մաֆ Փոթերի կյանքը կախաղանից, որին նա արժանի չէ:

7. Անհատական տարբերությունները. մարդիկ տարբեր կերպ են վերաբերվում իրենց անձնական կյանքին վերաբերող տեղեկության գաղտնիությանը. մեկի համար կարևոր է, որ դա ոչ ոք չիմանա, մյուսի համար խնդիր չէ, երբ մարդիկ իր մասին ավելի շատ բան իմանան: Օրինակ.

- Ռենդին և Շարոնը սովորում են Ռիվերքրեսթի բարձրագույն դպրոցում: Նրանք երկուսն էլ շատ ընկերներ ունեն և սիրում են շփվել նրանց հետ: Երբ Ռենդին խոսում է իր ընկերների հետ, նա վերջիններիս պատմում է գրեթե ամեն ինչ: Իսկ Շարոնը ամեն ինչ չէ, որ պատմում է:

Մի անգամ ինչ-որ մեկը լսել էր, թե Ռենդին ինչ է խոսում իր ամենամոտ ընկերոջ հետ: Շարոնը հարցրեց Ռենդիին, թե արդյո՞ք վերջինիս անհանգստացնում է այդ հանգամանքը: Ռենդին պատասխանեց. «Ոչ այնքան: Ինձ համար կարևոր է այն, որ ես կարողանամ գրուցել իմ լավ ընկերների հետ: Եթե ինչ-որ մեկը գաղտնալսում է իմ ասածը, դա այնքան էլ մեծ խնդիր չէ: Ես թաքցնելու ոչինչ չունեմ»:

Քննադատական մտածողության առաջադրանք

Աշխատեք գույգերով և պատասխանեք հարցերին՝ հիմնավորելով դրանք օրինակներով: Դուք կարող եք օգտագործել մասնավոր վարքագծի այն օրինակները, որոնք վերևում բերված են, կամ գտնեք օրինակներ ձեր փորձից կամ երևակայությունից՝ բացատրելու համար ձեր պատասխանները: Պատրաստ եղեք քննարկելու պատասխանները դասարանում:

1. Ինչպե՞ս կարող են մարդու ընտանեկան միջավայրը կամ անցյալում տեղի ունեցած դեպքերը ազդել վերջինիս վարքագծի վրա:

2. Ինչպե՞ս կարող է մարդու զբաղեցրած պաշտոնը կամ դերը ստիպել վերջինիս գաղտնիություն պահպանել:

3. Ինչպե՞ս կարող են մարդկանց արժեքային տարբերությունները բացատրել նրանց վարքագծի տարբերությունները:

Պատասխանեք հետևյալ հարցերին

1. Ինչքանո՞վ է ձեր մասնավոր վարքագիծը նմանվում դասի մեջ տրված օրինակներին: Ինչո՞վ են դրանք տարբեր և ինչո՞վ՝ նման:

2. Ինչո՞վ է տարբերվում ձեր մասնավոր վարքագիծը ձեր ընկերների վարքագծից: Որո՞նք են նմանությունները:

3. Արդյոք որոշակի մասնագիտության տեր մարդիկ (օրինակ բարձրակարգ մարզիկները, դերասանները կամ պետական պաշտոնյաները) մասնավոր կյանքի գաղտնիության ավելի քիչ հնարավորություն են պետք է ունենան: Ինչո՞ւ այո և ինչո՞ւ՝ ոչ:

4. Նկարագրեք, թե հետևյալ մասնագիտությունների տեր մարդկանց զբաղեցրած դիրքը ինչքանով կարող է ազդել նրանց մասնավոր կյանքի վրա:

Աճպարար *դերասան*

գյուտարար *քաղաքական գործիչ*

գրող *խրավարան*

5. Բացատրե՛ք, թե հետևյալ մասնագետները ինչպե՞ս կարող են ստիպել իրենց ներխուժել այլ մարդկանց մասնավոր կյանք.

Ամսագրի լրագրող *թոք-շոուի հաղորդավար*

նոստիկանության աշխատակից *բժիշկ*

մասնավոր հետախույզ *հոգեբան*

Ինչպե՞ս կարող են այս մասնագիտությունների տեր մարդիկ պաշտպանել այլոց մասնավոր կյանքը:

ԴԱՍ 10. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՄԱՐԴԻԿ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻՆ

Դասի նպատակը

Այս դասը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե ինչպես են տարբեր մշակույթներում վերաբերվում մասնավոր կյանքին: Երբ դուք ավարտեք դասը, կկարողանաք բացատրել վարքագծի հետ կապված մշակութային նմանությունները և տարբերությունները:

Տարբերությունները մշակույթների միջև

«Մշակույթ» եզրույթն օգտագործվում է տարբեր իմաստներով, բայց այս տեքստում մենք «մշակույթ» ասելով նկատի ունենք մարդկանց ապրելակերպը: Մշակույթն իր մեջ ներառում է սովորույթները, ընտանեկան կառույցը, քաղաքական կյանքը, կրոնը, տնտեսական և դատական համակարգերը, արվեստը, գիտությունը, կրթական կառույցները և պաշտամունքի առարկաները: Մշակույթը ապրելակերպ է, որը փոխանցվում է սերնդեսերունդ:

Մասնավոր կյանքը հատուկ է բոլոր մշակույթներին: Այնուամենայնիվ, տարբեր մշակույթների կրող մարդիկ կարող են տարբերվել այն ամենով, ինչը ցանկանում են գաղտնի պահել և այն ձևով, թե ինչպես են նրանք դա անում: Օրինակ՝ որոշ մարդիկ մտածում են, որ իրենց տարիքը պետք է գաղտնի պահվի: Մյուսները կարող են բացահայտել իրենց տարիքը, սակայն մտածել, որ իրենց կրոնը կամ քաղաքական պատկանելությունը մյուսներին չեն վերաբերում: Որոշ մշակույթներում մարդիկ միշտ միայնակ են ճաշում. նրանց համար անվայել է ուրիշ մարդկանց ներկայությամբ ուտելը:

Մարդիկ կարող են տարբերվել նաև այն հարցում, թե ինչպես են իրենք պահպանում իրենց մասնավոր կյանքը: Օրինակ՝ մի շարք երկրներում շենքերը կառուցվում են ձայնամեկուսիչ պատերով, մեկ այլ երկրում պատերը կարող են բարակ լինել և ձայները ազատորեն փոխանցվել մի տնից մեկ այլ տուն: Նման մշակույթներում մարդիկ պահպանում են իրենց մասնավոր կյանքի իրավունքը նպատակադրված չլսելով կամ ձևացնելով՝ իբր չեն լսում մեկը մյուսին:

Որոշ մշակույթներում մարդիկ կարող են չափազանց անհարմար զգալ իրենց, եթե խոսակցից մի քանի քայլ հեռավորության վրա գտնվեն: Մեկ այլ մշակույթում մարդիկ կարող են անհանգստանալ, եթե զրույցի ժամանակ խոսակիցը իրենց շատ մոտ կանգնած լինի: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ կկատարվի, եթե այսքան տարբեր մշակույթ կրող մարդիկ փորձեն զրուցել միմյանց հետ:

Ստորև տրված առաջադրանքը կատարելով դուք հնարավորություն կունենաք ուսումնասիրելու ձեր կյանքից տարբերվող մարդկանց մասնավոր կյանքը:

Քննադատական մտածողության առաջադրանք՝ «Ուսումնասիրելով վարքագիծը»

Ուշադիր կարդացեք հետևյալ պարբերությունը, ապա լրացրեք ներքևում տրված աղյուսակը և պատասխանեք հարցերին:

Մեհինակու ժողովուրդը

Մեհինակու ժողովուրդն ապրում է կենտրոնական Բրազիլիայում: Նրանց տները ծառերի տերևներից են պատրաստված: Տները կառուցվում են կենտրոնական հրապարակի շուրս կողմում: Արահետները դեպի հողամասեր, ինչպես նաև բնական կարիքները հոգալու և լոզանք ընդունելու տարածքները բաց են բոլորի համար: Սա թույլ է տալիս այն մարդկանց, ովքեր օգտվում են այս արահետներից, երևալ բացառապես բոլորի կողմից: Մեհինակու ժողովրդի համար խնդիր չէ, երբ իրենց խոսակցությունը լսում են հարևանները: Բոլորը տեղյակ են բոլորի ողջ կյանքին:

Ինչպե՞ս է մեհինակու ժողովուրդը պահպանում իր մասնավոր կյանքը: Նրանք դա անում են տարբեր ճանապարհներով: Այս մշակույթի կանոններից մեկն ասում է, որ կանայք իրավունք չունեն մտնելու տղամարդկանց տուն: Տղամարդկանց տունը փոքր տուն է, որը նրանք օգտագործում են ինչպես կրոնական, այնպես էլ սոցիալական նպատակներով:

Մեկ այլ կանոն ասում է, որ մեհինակուն չի կարող մտնել մի տուն, որն իր սեփականը չէ: Սա նշանակում է, որ գրույցները հաճախ տեղի են ունենում տների պատերի միջև: Տան ներսում կան տարածքներ, որոնք «արգելված» են տան մյուս անդամների համար: Եթե որևիցե անդամի կյանքում սոցիալական կարգավիճակի փոփոխություն է տեղի ունենում (օրինակ, տվյալ անձը պատրաստվում է դառնալ դեկավար), այդ մարդու շուրջ խոչընդոտներ են կառուցվում: Դրանից հետո նա որոշ ժամանակ կարող է բացառապես միայնակ լինել:

Կան այլ ձևեր, որոնցով մեհինակուները փորձում են պահպանել իրենց մասնավոր կյանքը: Թաքնված արահետներ և գաղտնի տարածքներ գոյություն ունեն այն դեպքերի համար, երբ մարդիկ ցանկանում են գաղտնիություն պահպանել: Ըստ գործող ավանդույթի՝ մարդ չպետք է պատմի ուրիշներին, երբ տեսնում է ինչ-որ մեկին սխալ կամ անօրինական բան անելիս: Մարդիկ ձևացնում են, թե իբր տեղյակ չեն այն ամենից, ինչ տեղի է ունենում հենց իրենց աչքի առջև:

Մեհինակու ժողովրդի մասնավոր կյանքի աղյուսակ		
Որո՞նք են մասնավոր կյանքի օբյեկտները	Ումի՞ց պետք է դրանք գաղտնի պահվեն	Ի՞նչ ձևով պետք է դրանք գաղտնի պահվեն

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան Մեհինակու ժողովրդի և ձեր անձնական կյանքի միջև:
2. Ի՞նչ բացատրություններ կարող եք տալ այս նմանությունների և տարբերությունների համար:
3. Երբևիցե հանդիպե՞լ եք մեկ այլ մշակույթի ներկայացուցչի: Ի՞նչ տարբերություններ եք դուք նկատել նրանց մասնավոր վարքագծում:
4. Ի՞նչ եք կարծում՝ ինչու մարդիկ, անկախ իրենց մշակույթից, մասնավոր կյանքի ինչ-որ չափաբաժնի կարիք ունեն:

Քննադատական մտածողության առաջադրանք՝ «Ուսումնասիրել վարքագիծը»

Կարդացեք հետևյալ պարբերությունը և մտածեք այն մասին, թե ինչպես կզգայիք ձեզ, եթե ապրեիք նկարագրված երևակայական հասարակության մեջ: Ինչպիսի՞ն կլինեք ձեր մասնավոր վարքագիծը:

Ջորջ Օրուելի «1984»-ը մի վեպ է, որտեղ մարդկանց մտքերը և գործողությունները վերահսկվում են Կառավարող կուսակցության կողմից: Բազմաթիվ շենքերի վրա կուսակցությունը հսկայական նկարներ է կախել, որոնց վրա մի մարդու դեմք է պատկերված: Նկարները այնպես են ստեղծված, որ թվում է, թե այդ մարդու աչքերը քեզ են հետևում, երբ շարժվում ես: Յուրաքանչյուր նկարի տակ գրված է. «Մեծ եղբայրը հետևում է քեզ»:

Յուրաքանչյուր մարդու բնակարանում հատուկ հեռուստատեսային էկրան կա: Հնարավոր չէ այն անջատել: Հեռուստաէկրանը ցույց է տալիս հաղորդումներ պարզապես

այնպես, ինչպես սովորական հեռուստացույցը, բայց այն նաև բազմաթիվ այլ բաներ է անում: Այն որսում է բնակարանում հնչող ցանկացած ձայն: Այնքան ժամանակ, որքան նրանք գտնվում են հեռուստակրանի տեսադաշտում, Մտքի ուստիկանությունը կարող է տեսնել և լսել նրանց: Ցանկացած քայլ կամ գործողություն բնակարանի ներսում կարող է վերահսկվել: Բնակարան բերված ցանկացած իր կարող է բացահայտվել հեռուստակրանի միջոցով:

Մարդկանց համար անհնար է իմանալ՝ արդյոք իրենց այդ պահին նայո՞ւմ են, թե՞ ոչ: Մի բան է միայն հաստատ. Մտքի ուստիկանությունը կարող է նրանց հետևել ցանկացած ժամանակ: Մարդիկ ստիպված են ապրել այսպիսի պայմաններում՝ իմանալով, որ ցանկացած պահի իրենց բոլոր ասածները լսվում են, և ցանկացած շարժում ինչ-որ մեկը դիտում է (բացառությամբ կատարյալ մթության դեպքերի):

Ի՞նչ եք կարծում

1. Այս երևակայական հասարակության մեջ մարդիկ ի՞նչը կցանկանան գաղտնի պահել:

2. Ինչպե՞ս նրանք կփորձեն դա գաղտնի պահել:

3. Ի՞նչ գործոններ կան, որոնք կարող են ազդել վերոնշյալ հասարակության մեջ մարդկանց վարքագծի վրա:

Այս դասի արդյունքում

1. Դիտեք հեռուստատեսային մի հաղորդում, որը նվիրված է մարդկանց և նրանց կյանքին, ապա մտածեք գլխավոր հերոսի վարքագծի մասին: Ի՞նչն է այդ հերոսը ցանկանում գաղտնի պահել: Ինչպե՞ս է նա փորձում պահպանել իր մասնավոր կյանքը: Ձեր կարծիքով՝ ի՞նչը կարող է բացատրել տվյալ կերպարի վարքագիծը: Գրե՛ք այս հարցերի պատասխանները և քննարկե՛ք դրանք դասարանում:

2. Գրեք փոքրիկ պատմություն Հայաստանում բնակվող մի մարդու մասին, որը ցանկանում է ինչ-որ բան գաղտնի պահել: Ձեր պատմության մեջ նկարագրեք, թե ինչն է տվյալ մարդը ցանկանում գաղտնի պահել: Անպայման նշեք նաև այն պատճառները, թե կոնկրետ ինչու է տվյալ մարդը ցանկանում ինչ-որ բան գաղտնի պահել:

3. Ձեր անձնական նոթատետրում գրեք առնվազն երեք կամ չորս հարց, որոնք դուք ունեք մասնավոր կյանքի մասին: Հարցերը կարող են լինել այն պատճառների կամ ճանապարհների մասին, որով մարդիկ պահպանում են իրենց մասնավոր կյանքի

անձեռնմխելիությունը, տարբեր մարդկանց վարքագծերի նմանությունները և տարբերությունները, կամ մասնավոր կյանքի ազդեցությունը մարդկանց կամ հասարակության վրա:

ԴԱՍ 11. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Դասի նպատակը

Ամենակարևոր հարցերից մեկը, որին մենք բախվում ենք որպես քաղաքացիներ, ներառում է մասնավոր կյանքի գաղտնիության սահմանները: Նմանատիպ հարցեր առաջանում են երկու կողմերի՝ անհատների կամ խմբերի միջև. ոմանք ցանկանում են գաղտնի պահել, իսկ մյուսները պնդում են, որ իրավունք ունեն իմանալու այն, ինչ ուրիշները գաղտնի են պահում: Որոշ դեպքերում խելամիտ և արդարացի է ինչ-որ բան գաղտնի պահել: Բայց երբեմն այլ արժեքներ կարող են ավելի կարևոր լինել: Այս դասի ընթացքում դուք կսովորեք որոշ մտավոր գործիքներ, որոնք օգտակար են մասնավոր կյանքին վերաբերող հարցերը գնահատելիս և ձեր մասնավոր կյանքը պաշտպանելիս:

Ե՞րբ պետության կողմից լիազորված անձինք իրավունք ունեն ներխուժելու քաղաքացու սեփական բնակարան:

Ըստ ՀՀ Սահմանադրության՝

Հոդված 24. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով՝ դատարանի որոշմամբ:

Այսպես, Պետության կողմից լիազորված անձինք կամ քաղաքացիներ կարող են մտնել ուրիշ քաղաքացու պատկանող տարածք, երբ սեփականատերը թույլ է տալիս կամ հրավիրում է նրանց իր տուն: Պետության կողմից լիազորված անձինք իրավունք ունեն առանց հրավերի մտնել մեր բնակարան որոշակի պայմանների դեպքում: Օրինակ՝ հրշեջները կարող են մտնել մեր տուն՝ կրակը հանգցնելու համար: Ոստիկանությունը կարող է մտնել մեր բնակարան՝ հանցագործությունը կանխելու համար: Ոստիկանությունը կարող է մտնել նաև այն դեպքում, եթե համոզեն դատարանին, որ

բավարար հիմքեր ունեն վստահ լինելու, թե բնակարանը խուզարկելու դեպքում կարող են հանցագործության ապացույցներ գտնել: Դատարանը խուզարկուներ է նշանակում, որոնք իրավունք ունեն փնտրելու այդ ապացույցները:

Կարդացեք հետևյալ իրավիճակը, մտածեք բախվող շահերի և այն ընտրության մասին, որ պետք է արվի դրանց միջև: Այնուհետև աշխատեք զույգերով և պատասխանեք հարցերին:

Քննադատական մտածողության առաջադրանք

Արշակ Միմոնյանը ՀՀ քաղաքացի է՝ բոլոր իրավունքներով և հիմնարար ազատություններով, ինչը նշանակում է, որ նա իր տանն ապահով է զգում իրեն, կարող է մտածել ցանկացած բանի մասին՝ առանց վախենալու, որ կառավարությունը կարող է հետապնդել իրեն դրա համար: Սակայն առանց մասնավոր կյանքի՝ նրա և մյուս բոլոր հայաստանցիների անհատականությունը և ազատությունը գրեթե նշանակություն չէին ունենա:

Պատկերացնենք, որ պարոն Միմոնյանը կասկածվում է մի խումբ հանցագործների ղեկավար լինելու մեջ: Ոստիկանությունը հավատացած է, որ այս խումբը մեղավոր է մեծ գումարների գողության և մի քանի մարդու սպանության մեջ: Ոստիկանությունը ցանկանում է վերջ դնել խմբի հանցավոր գործունեությանը: Դա անելու համար նրանց տեղեկատվություն է անհրաժեշտ Միմոնյանի և հանցախմբի գործողությունների մասին: Ոստիկանների գործը բարդանում է այն պատճառով, որ յուրաքանչյուր մարդ մասնավոր կյանքի գաղտնիության իրավունք ունի:

Հարցեր քննարկման համար

1. Մասնավոր կյանքի արժեքների և շահերի ի՞նչ կոնֆլիկտ է նկարագրված այս իրավիճակում:

2. Ինչո՞ւ է կարևոր ունենալ օրենքներ՝ որոշելու համար, թե երբ կարող է ինչ-որ մեկի մասնավոր կյանքի իրավունքը խախտվել:

Մտավոր գործիք 1. Ի՞նչ պետք է հաշվի առնել մասնավոր կյանքի հետ կապված խնդիրները վերլուծելիս

Ինչպես դուք տեսնում եք, մասնավոր կյանքը երբեմն կարող է բախվել այլ արժեքների և շահերի հետ, որոնք նույնպես կարևոր են: Օրինակ՝ հաճախ կոնֆլիկտ է առաջանում մասնավոր կյանքը պաշտպանելու և օրենքը իրականացնելու միջև:

Ցանկացած իրավիճակում մարդկանց կարծիքները կոնֆլիկտների լուծման վերաբերյալ տարբեր են: Բերենք մի քանի տեղին նկատառումներ, որոնք արժե հաշվի առնել, կարևոր են կամ կարող են կարևոր լինել՝ որոշելու համար, թե ինչպես լուծել մասնավոր կյանքի հետ կապված կոնֆլիկտները:

▪ **Համաձայնություն:** Երբ ուստիկանությունը ցանկանում է խուզարկել ինչ-որ մեկի մեքենան կամ տունը, և վերջինս տալիս է նրանց այդ թույլտվությունը, ստացվում է, որ այդ մարդը համաձայնում է խուզարկությանը: Մեկ այլ օրինակ կարող է լինել օդանավակայանում անվտանգության նկատառումներով քաղաքացիների ստուգումը. ինքնաթիռի ուղևորները գիտեն, որ մինչև ինքնաթիռ բարձրանալը նրանք պետք է անցնեն ստուգման համակարգի միջով, իսկ նրանց իրերը պետք է ստուգվեն: Քանի որ նրանք գիտեն նախապես, և եթե չցանկանան, որ իրենց իրերը ստուգվեն, պետք է ճանապարհորդելին այլ տրանսպորտային միջոցով, նշանակում է, որ նրանք համաձայնել են անվտանգության ապահովման նպատակով իրականացվող այս գործողությունների հետ: Նույն կերպ էլ՝ ընտրված պաշտոնյաները գիտեն, որ իրենց անձնական կյանքն ու վարքագիծը բացահայտ է դառնալու հանրության համար, հետևաբար, եթե նրանք չցանկանան, որ մյուսները ներխուժեն իրենց մասնավոր կյանք, պետք է չստանձնեին այդ պաշտոնը: Այս դեպքում ևս կարող ենք ասել, որ նրանք տվել են համաձայնություն, որպեսզի իրենց անձնական կյանքի մասին տվյալները հայտնի լինեն հանրությանը:

▪ **Օրինականություն:** Արդյո՞ք այն մարդիկ, ովքեր ցանկանում են ներխուժել ինչ-որ մեկի մասնավոր կյանք, դրա օրինական իրավունքն ունեն: Օրինակ՝ դատարանի կողմից որոշված խուզարկությունը ուստիկանությանը օրինական իրավունք է տալիս ներխուժելու նշված տարածք: Մաքսային աշխատողներն իրավունք ունեն խուզարկելու բոլոր նրանց, ովքեր հատում են ՀՀ սահմանները:

▪ **Օրինական պարտավորություն:** Արդյոք մարդը օրինական պարտավորություն, պատասխանատվություն ունի՞ չբարձրաձայնելու մեկ ուրիշի մասնավոր կյանքին վերաբերող տեղեկությունները: Այսպես, որոշ երկրներում հստակ օրինական պարտավորություններ են դրված բժիշկների և հիվանդանոցների վրա՝ չբացահայտելու իրենց հիվանդների բժշկական տվյալները: Ըստ Սահմանադրության՝ ուստիկանությունն

օրինական պարտավորություն ունի չներխուժելու մարդու մասնավոր կյանք՝ առանց թույլտվության, բացառությամբ՝ որոշ դեպքերի: Եվ երբ ինչ-որ մեկը պայմանագիր է ստորագրում՝ խոստանալով որոշակի տեղեկատվություն գաղտնի պահել, պայմանագիրը օրինական պարտավորություն է ստեղծում տեղեկատվությունը չտարածելու մասին:

▪ **Բարոյական պարտավորություն:** Ցանկացած մարդ, որ խոստանում է պահպանել գաղտնիքը, բարոյական պատասխանատվություն է ստանձնում այն ուրիշներին չհայտնելու համար: Մասնագիտական խորհրդատուները բարոյական պարտավորություն ունեն չբացահայտելու այն, ինչն իրենց հաճախորդներն ասում են առանձնազրույցի ժամանակ:

Կարդացեք Կալիֆորնիայի բնակիչ Չիմելի դեպքը և մտածեք վերևում թվարկված գաղափարների մասին: Այնուհետև աշխատեք փոքր խմբերով և պատասխանեք նկարագրությունից հետո տրված հարցերին: Այս դասի շրջանակներում ավելի ուշ ձեր խումբը կօգտագործի իր պատասխանները՝ հասկանալու համար, թե նշված իրավիճակում մասնավոր կյանքի հետ կապված կոնֆլիկտն ինչպես պետք է լուծվի:

Քննադատական մտածողության առաջադրանք

1965 թվականի սեպտեմբերի 13-ի կեսօրին ոստիկանության երեք աշխատակիցներ ժամանեցին Կալիֆորնիայի Սանտա Աննա քաղաք, Չիմել ազգանունով մի մարդու տուն: Ոստիկանությունը ձերբակալման թույլտվություն ուներ. պարոն Չիմելը մեղադրվում էր մետաղադրամների խանութից գողություն կատարելու մեջ: Սպաները թակեցին նրա դուռը և հանդիպեցին պարոն Չիմելի կնոջը: Նրանք հարցրեցին, թե արդյոք կարո՞ղ են ներս մտնել: Տիկին Չիմելը նրանց ներս թողեց: Նրանք այնտեղ սպասեցին տաս-տասնհինգ րոպե, մինչև պարոն Չիմելն աշխատանքից տուն վերադարձավ: Երբ պարոն Չիմելը ներս մտավ, ոստիկաններից մեկը նրան մեկնեց ձերբակալման հանձնարարականը: Նա նաև թույլտվություն հարցրեց բնակարանը խուզարկելու համար: Պարոն Չիմելը չհամաձայնեց, սակայն ոստիկաններն ասացին, որ, այնուամենայնիվ, պատրաստվում են խուզարկել տունը: Ոստիկանները, սակայն, խուզարկության թույլտվություն չունեին: Պարոն Չիմելի կնոջ հետ միասին ոստիկանները խուզարկեցին երեք սենյականոց բնակարանը, ավտոտնակը և բակը: Որոշ սենյակներում խուզարկությունն արագ ընթացավ: Ննջասենյակում և այլ սենյակներում ոստիկանները խնդրեցին տիկին Չիմելին բացել պահարանները և որոշ բաներ տեղից տեղ տեղափոխել՝ գտնելու իրեր, որոնք այդտեղ

կարող էին հայտնված լինել գողության հետևանքով: Որոնողական աշխատանքների արդյունքում ոստիկանները գտան մի քանի մետաղադրամներ, մեդալներ, մի քանի այլ իրեր և առգրավեցին դրանք: Ամբողջ խուզարկությունը տևեց մոտ քառասունհինգ րոպե:

Հարցեր քննարկման համար

1. Արդյոք տեր և տիկին Չիմելներից ինչ-որ մեկը համաձայնե՞ց իրենց տան խուզարկությանը: Բացատրեք ձեր պատասխանը:

2. Ոստիկանությունն օրինական իրավունք ունե՞ր խուզարկելու Չիմելների բնակարանը. ինչո՞ւ:

3. Ոստիկանությունն օրինական պարտավորություն ունե՞ր չխուզարկելու Չիմելների բնակարանը. ինչո՞ւ:

4. Ոստիկանությունը բարոյական պարտավորություն ունե՞ր չխուզարկելու Չիմելների բնակարանը. ինչո՞ւ:

Մտավոր գործիք 2.: Մասնավոր կյանքի հարցերը վերլուծելու գործընթաց

Մենք արդեն ուսումնասիրել ենք որոշ գաղափարներ, որոնք կարող են օգնել մեզ առավել հստակ հասկանալու մասնավոր կյանքի առանձնահատկությունները: Այժմ մենք կօգտագործենք այդ գաղափարները որպես հատուկ գործընթացի մաս՝ վերլուծելու մասնավոր կյանքը: Գործընթացը քայլերի ամբողջություն է, որին դուք կարող եք հետևել ցանկացած ժամանակ՝ գնահատելու և պաշտպանելու ձեր մասնավոր կյանքը: Հիշեք, որ յուրաքանչյուր քայլում «անհատը» կարող է լինել խումբ կամ կառույց, ինչպես, օրինակ, դպրոց կամ պետական հիմնարկություն:

1. **Առանձնացնել իր մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանող անհատին:** Հասկանալ, թե տվյալ անձը կոնկրետ ի՞նչն է ցանկանում գաղտնի պահել, ինչպես պետք է դա արվի և որո՞նք են դրա պատճառները:

2. **Առանձնացնել այն մարդկանց, ովքեր ցանկանում են ներխուժել մեկ ուրիշի մասնավոր կյանք:** Բացահայտել այն մարդկանց, ովքեր չեն ցանկանում հաշվի առնել ուրիշի մասնավոր կյանքի իրավունքը: Հասկանալ, թե ինչու է այդպես: Նկարագրել այն ճանապարհները, երբ մարդու մասնավոր կյանքը խախտվում է ուրիշների կողմից:

3. **Ուսումնասիրել համապատասխան նկատառումները:** Հաշվի առնել այն հանգամանքները, որոնք կարող են դեր խաղալ մասնավոր կյանքի հետ կապված

կոնֆլիկտներում, ինչպես, օրինակ, համաձայնությունը, օրինականությունը, օրինական պարտավորությունները և բարոյական պարտավորությունները: Նշել, թե դրանք ի՞նչ դեր ունեն տվյալ իրավիճակներում:

4. Գնահատել հարցը լուծելու այլընտրանքային ուղիները: Փորձել գտնել խնդիրը լուծելու այլ ուղիներ: Սա կարող է ներառել մասնավոր կյանքը ճանաչելու կամ ժխտելու պնդումը կամ փոխհամաձայնության հասնելու տարբերակը: Այլընտրանքային ուղիների մասին մտածելիս անպայման առանձնացնել և գնահատել յուրաքանչյուր առաջարկված իրավիճակի օգուտներն ու վնասները:

5. Պաշտպանել սեփական դիրքորոշումը: Որոշել, թե ո՞րն է խնդիրը լուծելու լավագույն տարբերակը և բացատրել սեփական որոշման պատճառները:

Քննադատական մտածողության առաջադրանք

Աշխատեք փոքր խմբերով: Իրականացրեք հինգ քայլից բաղկացած գործողությունները պարոն Չիմելի պատմության մեջ մասնավոր կյանքի հարցերը վերլուծելու համար և պատասխանեք ստորև տրված հարցերին: Յուրաքանչյուր խումբը պետք է բացատրի իր դիրքորոշումը դասարանին:

1. Առանձնացնել մասնավոր կյանքի իր իրավունքը պաշտպանող անհատին

• Ո՞ւմ մասնավոր կյանքի իրավունքն էր այս դեպքում վտանգի ենթարկվել կամ խախտվել:

- Ո՞ր իրերը պարոն Չիմելը կարող էր անհասանելի պահել ուրիշների համար:
- Ինչպե՞ս կարող էր Չիմելը դրանք թաքցնել:
- Ինչո՞ւ Չիմելը կարող էր ցանկանալ դրանք գաղտնի պահել:

2. Հստակեցնել որևէ մեկի կողմից ուրիշի մասնավոր կյանք ներխուժելու փորձը

• Ո՞վ էր ցանկանում սահմանափակել կամ ներխուժել Չիմելի մասնավոր կյանք:

• Ինչպե՞ս ոստիկանությունը սահմանափակեց կամ ներխուժեց Չիմելի մասնավոր կյանք:

• Ինչո՞ւ էր ոստիկանությունը ցանկանում խուզարկել Չիմելի բնակարանը:

3. Ուսումնասիրել համապատասխան նկատառումները

• Արդյոք տեր և տիկին Չիմելներից ինչ-որ մեկը համաձայնե՞ց իրենց բնակարանի խուզարկությանը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

• Ոստիկանությունն **օրինական իրավունք** ունե՞ր արդյոք խուզարկելու Չիմելների բնակարանը. ինչո՞ւ:

• Ոստիկանությունն **օրինական պարտավորություն** ունե՞ր արդյոք չխուզարկելու Չիմելների բնակարանը. ինչո՞ւ:

- Ոստիկանությունը **բարոյական պարտավորություն** ունե՞ր չխուզարկելու Չիմելների բնակարանը. ինչն՞ է:

4. Գնահատել խնդրի լուծման այլընտրանքային ուղիները

- Որո՞նք են Չիմելի մասնավոր կյանքի իրավունքի պնդումը ճանաչելու օգուտներն ու վնասները: Որո՞նք են այն ժխտելու օգուտներն ու վնասները:

- Ի՞նչ այլընտրանքային ուղիներ կան, որոնք ոստիկանությունը կարող էր օգտագործել Չիմելի դեմ վկայություններ հավաքելու համար: Որո՞նք են այս ուղիներից յուրաքանչյուրի օգուտներն ու վնասները:

5. Պաշտպանել սեփական դիրքորոշումը

- Ի՞նչ դիրքորոշում դուք կընդունեիք այս դեպքում: Հիմնավորե՛ք ձեր պատասխանները:

Տեսլիս առաջադրանք

1. Գրավոր պատասխանեք հետևյալ հարցերին:

Եթե դուք կարծում եք, որ ոստիկանությունը երբեք չպետք է իրավունք ունենաներ խուժելու ինչ-որ մեկի բնակարան, ապա ինչպե՞ս կարող է հասարակությունը պաշտպանվել հանցագործություններից: Եթե դուք կարծում եք, որ ոստիկանությունը կարող է ներխուժել ինչ-որ մեկի բնակարան ցանկացած ժամանակ, ապա ինչպե՞ս կարող է քաղաքացին ապահով և ազատ լինել: Եթե դուք կարծում եք, որ ոստիկանությունը պետք է ներխուժի ինչ-որ մեկի բնակարան միայն կոնկրետ պայմանների դեպքում, ապա ի՞նչ պայմաններ դուք կառաջադրեիք:

2. Հիշեք ձեր դպրոցում, բակում կամ քաղաքում տեղի ունեցած մի կոնֆլիկտ, որն անմիջական կապ է ունեցել ինչ-որ մեկի մասնավոր կյանքի իրավունքի խախտման հետ: Այս դասի ընթացքում սովորածը օգտագործեք տվյալ իրավիճակը գնահատելու համար: Մտածեք այլընտրանքային ուղիներ, որոնցով խնդիրը կարելի էր լուծել: Ընտրեք դրանցից լավագույնը: Այնուհետև դասարանին պատմեք տվյալ կոնֆլիկտի և կոնֆլիկտի լուծման ձեր առաջարկած ուղիների մասին:

3. Հարցազրույց անցկացրեք մի մասնագետի հետ, որն անմիջական կապ ունի մասնավոր կյանքի իրավունքի հարցերի հետ (ոստիկանության աշխատակից, դատավոր,

բժիշկ, իրավաբան կամ ավագանու անդամ): Խնդրեք տվյալ մասնագետին նկարագրել իրավիճակ և առաջարկել խնդիրը լուծելու մի քանի տարբերակներ:

ԴԱՍ 12. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔՈՒՄ ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ Ի ՀԱՅՑ ԳԱՆ՝ ԿԱՊՎԱՏ ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Դասի նպատակը

Այս դասը հնարավորություն է տալիս օգտագործել սովորողների մտավոր ունակությունները, ինտելեկտուալ գործիքները, որոնցով աշխատելու սկզբունքները նրանք արդեն յուրացրել են: Այդ աշխատանքը պետք է կատարել՝ ի նկատի ունենալով գործող օրենքների հետ փոխադարձ կապերը, համապատասխանությունը: Դասի նպատակներից է անհատների մասնավոր կյանքը պաշտպանելու անհրաժեշտության գիտակցումը: Դասի խնդիրներից է անհրաժեշտ տեղեկատվությունը բացահայտելու համար թաքնված տեսախցիկների օգտագործման դրական և բացասական հետևանքների վերհանումը, քննարկումը, մեկնաբանումը: Դասի ուսումնասիրությունից հետո սովորողները կկարողանան պաշտպանել իրենց անձնական տեսակետները, հստակեցնել ու հիմնավորել սեփական դիրքորոշումները:

Քննադատական մտածողության առաջադրանք

Ուսուցիչը, հաշվի առնելով սովորողների թվաքանակը, դասարանը բաժանում է 2, 4 կամ 6-հոգանոց խմբերի: Խմբերին հանձնարարվում է կարդալ հետևյալ երկու իրավիճակային տեքստերից մեկը և մտածել, թե թաքնված տեսախցիկները ինչպես կարող են փոխել մարդկանց զգացումներն ու վարքագիծը: Այնուհետև սովորողները պետք է աշխատեն փոքր խմբերում և պատասխանեն հարցերին: Ուսուցիչը պետք է պատրաստ լինի դասարանին ներկայացնելու այդ հարցերի պատասխանները:

1. «Անտառի աչքը»

Գրեթե ամեն տարի բռնկվող սեզոնային հրդեհները զգալի վնաս են հասցնում Հարավային Կալիֆորնիայի սարալանջերին: Հաճախ այրվում են նաև մարդկանց տները: Հրդեհներն առաջանում են հիմնականում բնական պատճառներով, ինչպես օրինակ՝ ցածր խոնավություն, չոր քամիներ, կայծակ: Երբեմն հրդեհներ առաջանում են տեխնածին պատճառներով՝ մարդկանց անփութության հետևանքով կամ դիտավորությամբ:

Կալիֆոռնիայի անտառապահպանության վարչությունն ուղիներ էր որոնում հայտնաբերելու այն մարդկանց, ովքեր դիտավորությամբ հրդեհում էին անտառները: Մի տարբերակը, որ նրանք ընտրեցին, թաքնված տեսախցիկներ տեղադրելն էր անտառներում՝ մայրուղիներին հարակից տարածքներում: Տեսախցիկը ֆիքսում էր անցնող ավտոմեքենաների համարանիշները և օրվա ժամը: Հենց հրդեհ էր բռնկվում, տեսախցիկների միջոցով ստացված լուսանկարներն անտառի պահապաններին օգտակար տեղեկություններ էին տալիս այն մասին, թե ով կարող էր մեղավոր լինել: Ոստիկաններն արդեն ձերբակալել էին մեկ մեղավորի և ցանկանում էին ավելի տարածել այս համակարգը: Նրանք հույս ունեին, որ դա կարող է դառնալ անտառների պաշտպանության համազգային համակարգ:

Սակայն տեսախցիկներն օգտագործվեցին մի շատ կարճ ժամանակ:

Ոչ բոլորն էին ոգևորված այս նորարարությամբ: Բազմաթիվ զբոսաշրջիկներ և թռչնորսներ գնում էին անտառ և սարեր՝ օտարների աչքից հեռու մնալու նպատակով: Նրանք անհանգստացած էին, որ նույնիսկ անտառում իրենց մասնավոր կյանքի գաղտնիությունը կխաթարվի: Պաշտոնյաները հավաստիացնում էին, որ անհանգստանալու կարիք չկա, քանի որ տեսախցիկները տեղադրվելու էին միայն մի քանի ճանապարհների վրա: Տեսախցիկներ չկային անտառների արահետներում և մարգագետիններում: Բացի այդ, նկարահանումները դիտվում էին միայն այն դեպքում, եթե հրդեհ էր բռնկվում: Տեսախցիկների տեղադրման նպատակն անտառի այցելուներին հետևելը չէր:

2. «Ավտոմեքենայի աչքը»

Ավստրիայում ավտոմեքենաներում տեղադրված տեսագրիչների տեսագրությունների համար որոշվել է տուգանել դրանց տերերին: Ընդ որում՝ տուգանքը բավական զգալի է անգամ եվրոպական այդ երկրի քաղաքացիների համար:

Այսպես. ավտոմեքենայի տիրոջը, ում մոտ առաջին անգամ կհայտնաբերեն տեսագրիչ, կտուգանեն 10 հազար եվրոյով: Եթե վարորդի մոտ այդ սարքը հայտնաբերեն երկրորդ անգամ, նա ստիպված կլինի վճարել արդեն 25 հազար եվրո՝ հայտնում է Die Presse-ը:

Kleine Zeitung-ի փոխանցմամբ՝ անձնական տվյալների պաշտպանության ավստրիական ընկերակցության փորձագետ Հանս Ցեգերն ասել է, որ տեսագրություն

կատարող տեխնիկական միջոցները ֆիքսում են ոչ միայն ճանապարհատրանսպորտային պատահարները ու ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը, այլև հասարակ անցորդներին: Իսկ դա արդեն համարվում է ներխուժում մարդու մասնավոր կյանք:

Օգտագործել մտավոր գործիքները դիրքորոշումը հասկանալու համար

1. Առանձնացնել մասնավոր կյանքի իրավունքը պնդող մարդուն

• Ո՞ւմ մասնավոր կյանքի իրավունքն էր վտանգի ենթարկվում տեսախցիկներն օգտագործելու դեպքում:

• Ի՞նչն էին ցանկանում գաղտնի պահել այդ մարդիկ:

• Ինչպե՞ս կարող էին նրանք գաղտնի պահել իրենց գտնվելու վայրը կամ գործողությունները:

2. Բացահայտել մարդկանց, ովքեր ցանկանում են ներխուժել ուրիշի անձնական կյանք:

• Ովքե՞ր էին ցանկանում սահմանափակել մասնավոր կյանքի գաղտնիությունը կամ ներխուժել անտառից օգտվողների կամ անցորդների մասնավոր կյանք:

• Ինչպե՞ս էր սահմանափակվում կամ խաթարվում անտառից օգտվողների կամ անցորդների մասնավոր կյանքը:

• Որո՞նք էին անտառից օգտվողների կամ անցորդների մասնավոր կյանքը սահմանափակելու կամ դրա գաղտնիությունը խաթարելու պատճառները:

3. Ուսումնասիրել համապատասխան նկատառումները

• Ձեր կարծիքով՝ երբ մարդիկ որոշում են կայացնում օգտագործելու պետական տարածքը, ինչպես, օրինակ, տվյալ անտառը, փողոցը, ավտոկանգառը արդյոք նրանք **համաձայնո՞ւմ են** նկարահանվել թաքնված տեսախցիկների կողմից:

• Ի՞նչ էք կարծում՝ Անտառապահպանության վարչությունը կամ վարորդները **իրավունք** ունե՞ին թաքնված տեսախցիկներ տեղադրելու անտառում կամ ավտոմեքենայում:

• Ձեր կարծիքով՝ Անտառապահպանության վարչությունը կամ վարորդները **օրինական պարտավորություն** ունե՞ին չներխուժելու անտառից օգտվողների կամ

անցորդների մասնավոր կյանք, ի՞նչը կարգելեր վարչությանը կամ վարորդներին տեսախցիկներ տեղադրել:

- Ձեր կարծիքով՝ Անտառապահպանության վարչությունը կամ վարորդները **բարոյական պարտավորություն** ունե՞ին չներխուժելու անտառից օգտվողների կամ անցորդների մասնավոր կյանք, ի՞նչը կարգելեր վարչությանը կամ վարորդներին տեսախցիկներ տեղադրել:

4. Գնահատել այլընտրանքային լուծումները

- Որո՞նք են Անտառապահպանության վարչության կամ վարորդների կողմից թաքնված տեսախցիկներ տեղադրելու թույլտվության օգուտներն ու վնասները:

- Որո՞նք են այն ուղիները, որոնք կարող է օգտագործել Անտառապահպանության վարչությունը կամ վարորդները՝ անտառը հրդեհողների կամ ավտոմեքենա առևանգողների, գողերի, ավազակների մասին տեղեկատվություն հավաքելու և նրանց ձերբակալելու համար: Դրանցից ո՞րն է առավել օգտակար: Ի՞նչ վնասներ կարող են լինել:

5. Պաշտպանել սեփական դիրքորոշումը

- Ի՞նչ դիրքորոշում ունեցաք դուք «Անտառի աչքը» կամ «Ավտոմեքենայի աչքը» տեքստերը ուսումնասիրելուց հետո: Բացատրեք ձեր դիրքորոշման պատճառները:

Տեքստերի ուսումնասիրությունից և քննարկումներից հետո սովորողները պաստառին գրում են իրենց առաջադրանքի պատասխանները, եզրակացություններն ու ընդհանրացումները: Այնուհետև ամբողջ խմբով ներկայացնում են իրենց տեքստի բովանդակությունը և պատասխանում հարցերին: Վերջում, մյուս խմբերի և ներկայացրած խմբի սովորողների օբյեկտիվ գնահատականները հաշվի առնելով, ուսուցիչը գնահատում է խմբի աշխատանքը: Երբ արդեն բոլոր խմբերը ներկայացրել են իրենց աշխատանքները, կատարվել են քննարկումներ, բանավեճ, հարց ու պատասխան, ուսուցիչը հարցերի միջոցով կատարում է անդրադարձ, ամփոփում է աշխատանքը և խմբերին տալիս է տնային հանձնարարություն

Տնային առաջադրանք

1. Պետական կառույցներն օգտագործում են հեռուստատեսությունների տեսախցիկները՝ վերահսկելու հասարակական այնպիսի վայրեր, ինչպիսիք են հանգստի

վայրերը, ավտոկանգառները և մետրոնները: Ձեր կարծիքով՝ որոնք են այս քայլի լավագույն դեմ և կողմ փաստարկները: Դուք համաձայն եք, որ կառավարությունը նկարահանի այս վայրերը: Գրավոր հայտնեք ձեր կարծիքները:

2. Որոշ դպրոցներում տեսախցիկներ են օգտագործում՝ վերահսկելու դահլիճները, դպրոցից դուրս գտնվող խաղահրապարակները և խնդրահարույց դասարանները: Որո՞նք են այս գործողության դեմ և կողմ փաստարկները: Համաձայն եք, որ դպրոցն այս նպատակով տեսախցիկներ օգտագործի: Նամակ գրեք դպրոցի ղեկավարությանը և հայտնեք ձեր կարծիքը:

3. Մի շարք բիզնեսներ, ինչպես օրինակ, բանկերը և խանութները, տեսախցիկներ ունեն, որոնք նկարահանում են ներս մտնող բոլոր հաճախորդներին: Կազմեք դրական և բացասական կողմերի աղյուսակ: Այլընտրանքային ի՞նչ ուղիներ կարող եք առաջարկել բանկերին և խանութներին: Ինչպե՞ս կհամոզեիք խանութներին, որ դադարեցնեն տեսախցիկների օգտագործումը: Ներկայացրեք ձեր առաջարկությունները դասարանում:

4. Որոշ հագուստի խանութների հանդերձարաններում դրված են տեսախցիկներ: Համաձայն եք արդյոք, որ կա դրա անհրաժեշտությունը. ինչո՞ւ: Հիմնավորեք ձեր պատասխանը:

ԴԱՍ 13. ՄԱՄՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՆՉ ԿՈՆՏԼԻԿՏԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Դասի նպատակը

Այս դասը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու մասնավոր կյանքի իրավունքի այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ մարդկանց հանդեպ կառավարության ձեռնարկած քայլերի հետևանքով: Առաջարկվող օրենքը պահանջում է որոշակի հանցագործություններ կատարած մարդկանց պարտադրելու կրել հատուկ անվանաթղթեր, որտեղ նշված կլինեն նրանց կատարած հանցանքների մասին: Երբ դուք ավարտեք այս դասը, կկարողանաք գնահատել այս հարցի վերաբերյալ տարբեր դիրքորոշումները և պաշտպանել ձեր սեփական դիրքորոշումը:

Պիտակները և մասնավոր կյանքը

Շատ մարդիկ հպարտությամբ են կրում իրենց կրոնը տարբերակող նշաններ: Բայց պատկերացրեք, թե ինչպես կզգայիք ձեզ, եթե օրենքը ձեզ ստիպեր կրել կրոնը նշող տարբերանշան: Բարեբախտաբար, խոսքի և կրոնի ազատությունները պաշտպանված են ՀՀ Սահմանադրությամբ: Այն, բնականաբար, կարգել էր նմանատիպ օրենքի ընդունումը: Բայց ֆաշիստական Գերմանիայում և եվրոպական մի շարք երկրներում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրեաները պարտավոր էին կրել «Դավթի դեղին աստղը»՝ մյուսներից տարբերվելու համար:

Մարդուն կրոնական տարբերանշան կրելու հարկադրանքը բախվում է նրա մասնավոր կյանքի իրավունքի հետ: Դա կարող է նաև բախվել այն հավատքին, որի հետևորդ քաղաքացին չի ցանկանում բացահայտվել: Իսկ ի՞նչ կարող ենք ասել պիտակի մասին, որը պարզապես կնշեր փաստեր տվյալ մարդու մասին: Օրինակ՝ ինչպե՞ս կզգայիք ձեզ, եթե ստիպված լինեիք կրել մի պիտակ, որտեղ նշված լիներ ձեր տարիքը, քաշը, զբաղմունքը: Արդյոք դուք ձեզ այլ կերպ կզգայի՞ք, եթե այդ պիտակի վրա նշված լինեին ձեր նախորդ կիսամյակի գնահատականները:

Ինչպես մենք արդեն տեսանք, մի շարք նմանություններ և տարբերություններ կան այն հարցում, թե ինչ են մարդիկ ցանկանում գաղտնի պահել: Հանցագործություն կատարած մարդիկ, հավանաբար, չեն ցանկանա, որ մյուսներն իմանան այդ մասին: Մինչ այժմ հանցագործներին պիտակավորելու բազմաթիվ փորձեր են ձեռնարկվել՝ թե պատմության և թե գրականության մեջ: Աստվածաշնչում, երբ Կայենը սպանեց Աբելին, եղբայրասպանի վրա «նշան» մնաց: «Սկարլետի նամակը» վեպում դավաճանության մեջ մեղադրվող կինը ստիպված էր իր հագուստի վրա կրել «Դ» տառը՝ իր հանցագործությունը բոլորին հայտնի դարձնելու համար: Գրքի հերոսներից մեկը նույնիսկ առաջարկում էր կնոջ ճակատի վրա նշան անել: Գաղութային համակարգի գոյության ժամանակներում մարդիկ պատժվում էին անարգանքի սյունին գամվելով, որն իրենից ներկայացնում էր կողպվող փայտե կաղապարներ, որոնք բռնում էին մարդու ձեռքերը և գլուխը: Անարգանքի այդ սյուները տեղադրվում էին բոլորին տեսանելի վայրում, և այնտեղ գտնվող մարդիկ սովորաբար ծաղրի առարկա էին դառնում մյուսների կողմից:

Հանցագործներին պիտակավորելու փորձեր արվել են նաև մեր ժամանակներում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Ֆրանսիան ազատագրվեց ֆաշիստական վարչակարգից, ֆրանսիացի ազգայնականները սափրում էին այն մարդկանց գլուխները, ովքեր ժամանակին համագործակցել էին ֆաշիստների հետ: ԱՄՆ-

ում ուստիկանության աշխատակիցները որոշ քաղաքներում տարածում էին «խանութների կասկածվող գողերի» լուսանկարներն առևտրականների շրջանում: Մարդկանց պիտակավորելը հակասական թեմա է: Շատ մարդիկ կարծում են, որ դա ստորացնում է պիտակավորվողին, ինչպես նաև համարվում է ներխուժում վերջինիս մասնավոր կյանք: Մինչդեռ մյուսները կարծում են, որ պիտակավորելը խելամիտ ճանապարհ է մարդկանց սովորեցնելու համար, այն կանխում է հանցանքը:

Քննադատական մտածողության առաջադրանք 1.

Կարդացեք հաջորդ պարբերությունը և մտածեք այն մասին, թե ինչու որևէ հանցագործություն կատարած մարդիկ իրավունք ունեն, որպեսզի նրանց մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանվի: Մտածեք նաև այն մասին, թե արդյոք հանցագործներին պիտակավորելը արդա՞ր և խելամի՞տ ճանապարհ է հասարակության համար՝ պատժելու հանցագործներին և նրանցից պաշտպանելու այն մարդկանց, ովքեր չեն հետևում օրենքին: Այնուհետև աշխատեք զույգերով և պատասխանեք հարցերին:

Դուք և ձեր դասարանցիները ընտրվել եք որպես պետական օրենսդրություն գրող անհատներ: **Քրեական օրենսգիրքը**, որը պարունակում է այն օրենքները, որոնք սահմանում և հաստատում են պատիժներ հանցագործությունների համար, այսօրվա ուսումնասիրության առարկան է: Օրենսգիրքը կամ առաջարկված օրենքը ներկայացված է: Օրենքը պահանջում է, որպեսզի քրեական հանցագործություն կատարած բոլոր անձինք կրեն հատուկ պիտակ, որի վրա գրված է «կատարել է քրեական հանցագործություն»: Քրեական հանցագործությունը լուրջ պատիժ է ենթադրում՝ առնվազն մեկ տարի կալանք:

Օրենսդիրները տարբեր կարծիքներ ունեն այս օրենքի հետ կապված: Նրանցից ոմանք առաջարկում են, որպեսզի յուրաքանչյուրի կատարած հանցանքը նշվի այդ պիտակի վրա: Օրինակ՝ ինչ-որ մեկի պիտակի վրա կարող է գրված լինել. «կատարել է սպանություն» կամ «կատարել է գողություն»: Մյուսները պնդում են, որ միայն որոշակի (ծանր) հանցանք կատարած անձինք, ինչպես, օրինակ, բռնաբարոդները, մարդասպանները կամ թմրադեղերի վաճառքով զբաղվողները, պետք է պիտակավորվեն: Կան մարդիկ էլ, ովքեր կտրականապես դեմ են այս օրենքին: Նրանք մտածում են, որ ոչ ոք, անկախ իր քրեական անցյալից, արժանի չէ նման վերաբերմունքի:

Օգտագործել մտավոր գործիքները սեփական դիրքորոշումը պաշտպանելու համար

1. Առանձնացնել մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանող անձին

- Ո՞ւմ մասնավոր կյանքի իրավունքը վտանգի կենթարկվի այս օրինագծով:
- Ի՞նչը կցանկանան գաղտնի պահել այդ մարդիկ:
- Ինչպե՞ս նրանք կկարողանային այդ տեղեկատվությունը գաղտնի պահել:
- Ի՞նչ պատճառով նրանք կցանկանային դա գաղտնի պահել:

2. Առանձնացնել այն մարդկանց, ովքեր ցանկանում են ներխուժել մյուսների անձնական կյանք

• Եթե այս օրինագիծը դառնա օրենք, ովքե՞ր կներխուժեն հանցագործություն կատարած անձանց մասնավոր կյանք:

• Հանցագործություն կատարած մարդկանց մասնավոր կյանքի իրավունքը ինչպե՞ս կխաթարվի:

• Ի՞նչ պատճառներ կան այդ մարդկանց մասնավոր կյանքի իրավունքն այս ճանապարհով խաթարելու համար:

3. Ուսումնասիրել համապատասխան նկատառումները.

• Ձեր կարծիքով՝ երբ մարդիկ որոշում են հանցանք կատարել, նրանք տալի՞ս են իրենց **համաձայնությունը** հանցագործի պիտակ ստանալուն:

• Ի՞նչ էք կարծում՝ պետությունը **օրինական իրավունք** ունի՞ հանցագործներին ստիպելու կրել տարբերանշաններ. ինչո՞ւ:

• Ձեր կարծիքով՝ պետությունը **բարոյական պարտավորություն** ունի՞ արդյոք չպահանջելու հանցագործներից կրելու տարբերանշաններ:

4. Գնահատել այլընտրանքային լուծումները.

• Որո՞նք են հանցագործների տարբերանշաններ կրելու օգուտներն ու վնասները:

• Որո՞նք են այլընտրանքային այն ճանապարհները, որոնք հասարակությունը կարող է գործի դնել՝ պաշտպանելու ինքն իրեն այն մարդկանցից, ովքեր ոտնահարել են օրենքը: Որո՞նք են սրանցից յուրաքանչյուրի դրական և բացասական կողմերը:

5. Պաշտպանել սեփական դիրքորոշումը

• Ինչպիսի՞ն կլինեն ձեր դիրքորոշումը այս օրինագծի հետ կապված: Հիմնավորեք ձեր տեսակետը:

Քննադատական մտածողության առաջադրանք 2.

Ղերախաղ՝ օրենսդրական բանավեճ

Հիմա, երբ դուք արդեն բավականաչափ գաղափար կազմեցիք այս նոր օրինագծի մասին, ձեր դասարանում անցկացրեք ղերախաղ՝ այս թեմայով օրենսդրական քննարկման հետ կապված: Դասարանը պետք է բաժանվի երեք խմբի.

• **Քաղաքային օրենսդիրներ.** դուք ներկայացնում եք խոշորագույն քաղաքներում ապրող մարդկանց, որտեղ քրեական հանցագործությունները, ինչպես, օրինակ, սպանությունը, բռնաբարությունը կամ գողությունը, լուրջ խնդիրներ են:

• **Արվարձանային օրենսդիրներ.** դուք ներկայացնում եք արվարձանների և փոքր քաղաքների մարդկանց, որտեղ բռնություն չպարունակող հանցագործությունները, ինչպես, օրինակ, թալանը կամ մեքենաների գողությունը, լուրջ խնդիրներ են:

• **Գյուղական օրենսդիրներ.** դուք ներկայացնում եք գյուղերում և ագարակներում ապրող մարդկանց, որտեղ հանցագործություններ քիչ են լինում:

Յուրաքանչյուր խումբը պետք է ներկայացնի, թե իրենց շրջանների մարդիկ ինչպե՞ս կվերաբերվեն օրինագծին: Արդյոք այդ մարդիկ կցանկանա՞ն, որպեսզի իրենք.

- Աջակցեն օրինագծի մշակման աշխատանքներին,
- Դեմ հանդես գան օրինագծին,
- Ուղղումներ մտցնեն կամ փոփոխեն օրինագիծը:

Հենց որ խմբերը քննարկեն օրինագիծը, յուրաքանչյուր աշակերտ պետք է որոշի՝ ինքը կո՞ղմ, թե՞ դեմ է օրինագծին: Հաշվի առեք ինչպես ձեր անձնական տեսակետը, այնպես էլ այն մարդկանց, ում դուք ներկայացնում եք: Պատրաստ եղեք բացատրելու և պաշտպանելու ձեր դիրքորոշումը: Օրինագծում փոփոխություն մտցնելու յուրաքանչյուր առաջարկություն պետք է քննարկվի և որոշվի տեղում՝ քվեարկության արդյունքում: Երբ օրինագիծն ամբողջությամբ քննարկվի, ևս մեկ քվեարկություն պետք է տեղի ունենա՝ օրինագիծը ընդունելու կամ մերժելու կապակցությամբ:

Տնային առաջադրանք

1. Պատկերացրեք, որ ձեր օրինագիծն իրենից ենթադրեր մի օրենք, որը կպահանջեր ՄԻԱՎ-ով վարակված բոլոր անձանց կրել մի պիտակ, որի վրա նշված կլիներ. «Զգուշացեք.

վարակված է ՄԻԱՎ-ով»: Ձեր կարծիքով՝ որո՞նք կլինեին այս օրենքի դեմ և կողմ լավագույն փաստարկները: Դուք դե՞մ, թե՞ կողմ կլինեիք. ինչո՞ւ: Շարադրեք ձեր պատասխանները:

2. Այն աշակերտների անունները, որոնք դպրոցում աչքի են ընկնում, որպես կանոն, տպագրվում են դպրոցի թերթում: Արդյոք սա ներխուժո՞ւմ է մասնավոր կյանքի սահմաններ: Արդյոք մասնավոր կյանքի խախտում կլինե՞ր, եթե վատ առաջադիմություն ունեցող աշակերտների անունները նույնպես տպագրվեին դպրոցի թերթում: Կա արդյոք տարբերություն այս երկու իրավիճակների միջև: Շարադրեք ձեր պատասխանները:

3. Գրադարանում կամ համացանցում որոնումներ կատարեք և պարզեք, թե ինչ է կատարվել հետևյալ իրավիճակների վերջում.

- Երբ ֆաշիստները Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Եվրոպայում ապրող բոլոր հրեաներից պահանջում էին կրել «Դավթի դեղին աստղ» տարբերանշանը,

- Երբ գաղութային Ամերիկայում որոշ մարդիկ պիտակվում էին որպես կախարդներ,

- Երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ճապոնացի-ամերիկացիները համարվեցին անվտանգության սպառնալիք և ստիպված էին լքել իրենց տները:

Դասարանում պատմեք, թե ինչ էք սովորել, կամ իրավիճակը նկարագրող փոքրիկ պատկերներ պատրաստեք:

ԴԱՍ 14. ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՆ ԽՄԲԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասի նպատակը

Այս դասը հնարավորություն է տալիս դերախաղ անցկացնելու Սահմանադրական դատարանում՝ խմբերի և կազմակերպությունների մասնավոր կյանքի (տեղեկատվական) գաղտնիության իրավունքների մասին: Երբ դուք ավարտեք այս դասը, ունակ կլինեք գնահատելու խմբերի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի մասին տարբեր դիրքորոշումներ և պաշտպանելու սեփական տեսակետը:

Խմբերի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի մասին կոնֆլիկտներ

Որքա՞ն կարող է լինել որևէ խմբի կամ կազմակերպության մասնավոր կյանքի կամ տեղեկությունների գաղտնիության սահմանը: Արդյոք խումբը կարո՞ղ է իր անդամների ինքնությունը գաղտնի պահել: Արդյոք խումբը կարո՞ղ է ինքնուրույն որոշել իր անդամներին:

Այս հարցերի պատասխանը կարելի է գտնել՝ ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդված-ը՝ *«յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու եւ դրանց անդամագրվելու իրավունք»*: Մենք կարող ենք սա անվանել շփման ազատություն: Օրինակ՝ եկեղեցականները պետք է ազատ լինեն հանդիպելու իրար՝ իրականացնելով կրոնական ազատության իրենց իրավունքը: Ինչպես գիտենք, կան մտքեր և զգացումներ, որոնք մարդիկ կարտահայտեն միայն իրենց ամենամոտ ընկերների ներկայությամբ՝ առանձին: Այդ պատճառով էլ շփման ազատությունն օգնում է պաշտպանել խոսքի ազատությունը:

Բայց երբեմն պատճառներ կան սահմանափակելու շփման ազատությունը: Խմբի մասնավոր կյանքը կպաշտպանվի՞, թե՞ ոչ, կախված է վերջինիս գործունեության նպատակից, չափերից կամ այլ կարևոր հատկանիշներից: Եթե դուք ձեր ընկերների հետ մի ակումբ ստեղծեք, կարող եք որոշել և այլևս ոչ ոքի չանդամագրել: Բայց եթե դուք բիզնես բացեք, օրենքը ստիպում է, որպեսզի դուք շփվեք հասարակության բոլոր անդամների հետ հավասար պայմաններով: Քաղաքական կուսակցությունը կարող է իր անդամների ինքնությունը գաղտնի պահել, բայց փողոցային խմբավորումն այդ իրավունքը չունի:

Հետևյալ պարբերությունը հիմնված է վճարելի դատարանի՝ 1984 թվականի մի որոշման վրա: Երբ դուք կարդաք այն, մտածեք այն մասին, թե ինչն^օ էն խմբերը կամ կազմակերպությունները ցանկանում սահմանափակել անդամների քանակը: Մտածեք նաև այն մասին, թե ինչն^օ որոշակի խմբերից հասարակությունը կարող է պահանջել, որ դրանց կազմի մեջ պետք է ընդգրկել բոլոր ցանկացողներին: Աշխատեք փոքր խմբերով և պատասխանեք հարցերին:

Քննադատական մտածողության առաջադրանք

«ԱՄՆ Ջեյսիները» ազգային կազմակերպություն է, որին կարող են անդամագրվել միայն 18-35 տարեկան տղամարդիկ: Տարիքային այդ խմբին պատկանող ցանկացած տղամարդ կարող է անդամագրվել: Անդամները մասնակցում են բիզնես հմտությունների մասին դասընթացների: Նրանք կարող են նաև հանդիպել մարդկանց, ովքեր կարող են իրենց օգնել հաջողության հասնել բիզնեսում: 35 տարեկանից մեծ կանայք և տղամարդիկ կարող են դառնալ կազմակերպության «ստացացված անդամներ», սակայն չեն կարող քվեարկել կամ կազմակերպությունում պաշտոն ստանձնել: Ջեյսիում պարբերական հանդիպումներ են լինում: Նրանք նաև հանդիպումներ և զանազան միջոցառումներ են իրականացնում՝ բարեգործության համար գումար հավաքելու նպատակով:

Ստացացված անդամները և ընդհանրապես ցանկացած մարդ ազատ է մասնակցելու այս միջոցառումներին:

Մինեսոտայի նահանգն օրենք ընդունեց, որն արգելում էր սեռային խտրականությունը: Այս օրենքը վերաբերում էր նաև Ջեյսիին: Կազմակերպությունից պահանջվեց անդամ դարձնել նաև կանանց:

Ջեյսիները դիմեցին դատարան՝ օրենքը **հակասահմանադրական** ճանաչելու պահանջով: Նրանք պնդում էին, որ իրենք մասնավոր բարեգործական կազմակերպություն են և պետությունն իրավունք չունի խառնվելու իրենց ներքին հարցերին: Այս օրենքը ոտնահարում էր նրանց շփման ազատության իրավունքը: Օրենքը անվավեր էր և ազդեցություն չունեց:

Մինեսոտայի կառավարությունը չհամաձայնեց: Կառավարությունը պնդում էր, որ Ջեյսին բիզնեսով է զբաղվում: Օրենքը պարտադիր էր՝ կանխելու բիզնեսում կանանց դեմ խտրականությունը: Ամեն դեպքում՝ օրենքը Սահմանադրությանը համապատասխանում էր և վավեր էր:

Եթե դուք լինեիք Սահմանադրական դատարանի անդամ, ի՞նչ կորոշեիք:

Օգտագործել մասնավոր գործիքները դիրքորոշումը պաշտպանելու համար

1. Առանձնացնել մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանող մարդուն

- Ո՞ւմ մասնավոր կյանքի իրավունքն է խախտվում այս դեպքում:
- Ի՞նչ էին ցանկանում գաղտնի պահել Ջեյսիները:
- Ինչո՞ւ էին նրանք ցանկանում ինչ-որ բաներ գաղտնի պահել:

2. Առանձնացնել այն մարդկանց, ովքեր ցանկանում էին ներխուժել խմբի մասնավոր կյանք

• Ո՞վ էր ցանկանում սահմանափակել կամ ներխուժել Ջեյսիների մասնավոր կյանք:

• Ինչպե՞ս կարող էր Ջեյսիների մասնավոր կյանքի իրավունքը սահմանափակվել կամ խախտվել:

• Ինչո՞ւ էին նրանք ցանկանում սահմանափակել Ջեյսիների մասնավոր կյանքի իրավունքը:

3. Ուսումնասիրել համապատասխան նկատառումները

• Ի՞նչ եք կարծում՝ արդյոք Ջեյսիները **համաձայնե՞լ** են, որպեսզի պետությունը խառնվի իրենց կազմակերպությանն անդամակցելու հարցերին՝ բիզնեսի հետ կապված գործողություններ իրականացնելով:

• Ձեր կարծիքով՝ Մինեսոտայի կառավարությունը **օրինական իրավունք** ունե՞ր արգելելու մարդկանց՝ սեռով պայմանավորված խտրականությունը: Սա չէ՞ր սահմանափակում Ջեյսիների շփման ազատության իրավունքը:

• Մինեսոտայի կառավարությունը **բարոյական պարտավորություն** ունե՞ր արդյոք չխառնվելու Ջեյսիների կազմակերպությանն անդամակցելու մասին որոշումներին:

4. Գնահատել այլընտրանքային լուծումները

• Որո՞նք են Ջեյսիների մասնավոր կյանքի իրավունքը և շփման ազատությունը ճանաչելու դրական և բացասական կողմերը: Որո՞նք են այն մերժելու դրական և բացասական կողմերը:

- Կա՞ն արդյոք այլ ուղիներ, որով Մինեսոտայի կառավարությունը կարող էր ապահովել կանանց հավասար իրավունքները բիզնեսի աշխարհում: Որո՞նք են սրանցից յուրաքանչյուրի դրական և բացասական կողմերը:

5. Պաշտպանել սեփական դիրքորոշումը

- Ի՞նչ դիրքորոշում դուք կընդունեիք այս իրավիճակում: Հիմնավորեք ձեր պատասխանը:

Քննադատական մտածողության առաջադրանք

Դերախաղ: Լսումներ Սահմանադրական դատարանում

Այս դերախաղի ընթացքում դուք կմասնակցեք Սահմանադրական դատարանի լսումներից մեկին: Դասարանի աշակերտներից 9-ը պետք է նշանակվեն դատավորներ: Նրանցից մեկը պետք է ընտրվի գլխավոր դատավոր և լինի նախագահող: Դասարանի մնացած աշակերտները պետք է բաժանվեն հետևյալ խմբերի:

1. Մինեսոտայի գլխավոր իրավաբանի գրասենյակ.

Ձեր **խնդիրն** է կյանքի կոչել Մինեսոտա նահանգի օրենքները: Փաստարկներ նախապատրաստեք, որպեսզի համոզեք Սահմանադրական դատարանին, որ տվյալ օրինագիծը համապատասխանում է Սահմանադրությանը և պետք է ընդունվի:

2. ԱՄՆ Ջեյսիներ

Դուք պնդում եք, որ այս օրինագիծը ոտնահարում է մասնավոր կյանքի և շփման ազատության ձեր իրավունքները: Պատրաստե՛ք փաստարկներ համոզելու Սահմանադրական դատարանին, որ օրինագիծը հակասահմանադրական է և անվավեր:

3. Կանանց ազգային ասոցիացիա.

Ձեր կազմակերպությունը ներկայացնում է ԱՄՆ-ում գործող հարյուրավոր գոլֆ և թենիս ակումբներ: Ակումբներն անհանգստացած են, որ եթե Մինեսոտան ընդունի, ապա մյուս նահանգները նույնպես կընդունեն այս օրինագիծը: Եթե սա տեղի ունենա, ապա անդամներին ընտրելու և մերժելու իրենց ազատությունը կսահմանափակվի: Ձեզ հատուկ հնարավորություն է տրվել ներկայացնելու ձեր տեսակետը Սահմանադրական դատարանում: Փաստարկներ պատրաստե՛ք համոզելու Սահմանադրական դատարանին, որ սոցիալական ակումբները շփման ազատության իրավունք ունեն և որ օրինագիծը հակասահմանադրական է, քանի որ այն ոտնահարում է այդ իրավունքը:

Յուրաքանչյուր խումբ կարող է որոշել իր դիրքորոշման լավագույն փաստարկները: Այնուհետև խմբերը պետք է ընտրեն երկու կամ երեք ներկայացուցիչ՝ իրենց տեսակետը դատարանին ներկայացնելու համար: Իրենց հերթին՝ դատավորները պետք է հարցեր նախապատրաստեն բոլոր ներկայացնողներին: Այնուհետև դատավորները պետք է դասարանի ներկայությամբ որոշում կայացնեն: Որից հետո նրանք պետք է քվեարկեն օրենքը ընդունելու կամ մերժելու համար և պատճառները բացատրեն դասարանին:

ԴԱՍ 15. ԻՆՉ ՎՆԱՍ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋՆԹԱՅՐ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻՆ

Դասի նպատակը

Այս դասի շրջանակներում դուք կմասնակցեք երևակայական հանրային լսումների: Լսումների նպատակն է կառավարության համար առաջարկել կենտրոնական համակարգչային բազա: Երբ դուք ավարտեք դասը, կկարողանաք բացատրել և գնահատել այս առաջարկի շուրջ գոյություն ունեցող տարբեր տեսակետները: Դուք նաև կկարողանաք ներկայացնել և պաշտպանել ձեր սեփական դիրքորոշումը:

Ինչպե՞ս են համակարգիչներն ազդում մասնավոր կյանքի վրա:

Համակարգիչներն ազդում են մեր հասարակությունում ապրող յուրաքանչյուր անձի վրա: Համակարգիչները մշտապես աշխատում են՝ պահելով ահռելի քանակությամբ տեղեկատվություն և անելով ամեն ինչ մարդկանցից արդյունավետ՝ էլեկտրականության ստեղծումից մինչև գրքերի տպագրություն, հեռախոսների օգտագործումից մինչև կրեդիտային քարտերի օգտագործում:

Սակայն ժամանակակից համակարգչային սարքերը կարող են նաև խնդիրներ առաջացնել մերօրյա հասարակության համար: Դրանք հնարավորություն են ստեղծում հեշտությամբ գողանալու տեղեկատվություն և այն փոփոխել կամ տեղափոխելու: Թերևս դուք երբեք չեք մտածել, թե ձեր կամ ձեր ընտանիքի մասին որքան շատ տեղեկատվություն կարող է պարունակվել համակարգչի հիշողության մեջ: Ամեն անգամ, երբ դուք.

- Օգտագործում էք ձեր հեռախոսը, համակարգիչը պահպանում է ձեր զանգած համարը, ամսաթիվը և խոսելաժամանակը

- Ֆիլմ էք վարձում խանութում, համակարգիչը պահպանում է ձեր վարձած ֆիլմի անունը և ամսաթիվը,

- Օգտագործում էք բանկային քարտը, համակարգիչը պահպանում է ամսաթիվը, օգտագործված գումարի չափը, խանութի անունը և գտնվելու վայրը, ինչպես նաև ձեր գնած իրի նկարագրությունը,

- Բաժանորդագրվում էք ինչ որ ամսագրի կամ թերթի, համակարգիչը պահպանում է ձեր անունը և հասցեն, տվյալ ամսագրի անունը և ամսաթիվը, թե դուք երբևէն էք սկսել ստանալ այդ ամսագիրը,

- Վարկ էք վերցնում, համակարգիչը պահպանում է ձեր անունը, հասցեն և հեռախոսահամարը, ձեր աշխատավայրի անվանումը, հասցեն և հեռախոսահամարը, որքան գումար էք դուք աշխատում, ձեր ունեցվածքի արժեքը, թե դուք ինչքան գումար էք արդեն պարտք և ամսական որքան գումար էք վճարում ձեր պարտքերի դիմաց,

- Առողջական ապահովագրություն էք անում, համակարգիչը պահպանում է ձեր քաշը, հասակը, տարիքը, բժշկական պատմությունը, ձեր բժիշկների անունները և հասցեները, ձեր օգտագործած դեղերի նկարագրությունը,

- Ապահովագրում էք ձեր մեքենան, համակարգիչը պահպանում է ձեր հասցեն, ձեր մեքենայի տարիքը և մակնիշը, որքան էք դուք այն վարում ամեն օր և ամբողջ տարվա ընթացքում,

- Վճարում էք ձեր հաշիվները, համակարգիչը պահպանում է ձեր յուրաքանչյուր վճարման ամսաթիվը և գումարի չափը:

Համակարգիչները պահպանում են նաև տեղեկատվություն այն մասին, թե ամսական դուք ինչքան էլեկտրաէներգիա, գազ և ջուր էք օգտագործում, որքան հարկ էք վճարում, ձեր մազերի և աչքերի գույնը և արդյոք դուք ակնոց կրում էք, թե ոչ:

Ձեր կյանքի մանրամասն նկարագիրը կարելի է կազմել այն ամբողջ տեղեկատվությունից, որ պահպանվում է համակարգչի մեջ: Կազմակերպությունները, որպես կանոն, իրենք են որոշում՝ տրամադրել իրենց համակարգիչների մեջ եղած տեղեկատվությունը, թե՛ ոչ: Որոշ մասնավոր ընկերություններ ստեղծել են մեծ համակարգչային բազաներ: Այս ընկերությունները միավորում են տարբեր աղբյուրներից ստացած տեղեկությունները, օրինակ, երբ մարդիկ վարկի, բանկային քարտի կամ

վարորդական իրավունքի համար դիմելիս համապատասխան ձևաթղթեր են լրացնում: Այնուհետև նրանք վաճառում են այդ տեղեկատվությունը այն բիզնեսներին, որոնք փորձում են գտնել այն մարդկանց, ովքեր կգնեն իրենց արտադրանքը: Անձից մի նպատակով ստացած տեղեկատվությունը կարող է օգտագործվել այլ մարդկանց կողմից և բոլորովին այլ նպատակներով:

Համակարգիչները մարդկանց համար գրեթե անկառավարելի են դարձրել այն, թե ով կարող է իրենց մասին անձնական տեղեկատվություն իմանալ: Եվ որքան առաջ ենք շարժվում ժամանակի մեջ, համակարգիչներն ավելի հզոր են դառնում: Նրանք կկարողանան հավաքել և պահպանել ավելի ու ավելի շատ տեղեկատվություն: Ավելի շատ մարդիկ և կազմակերպություններ կսկսեն համակարգիչներ օգտագործել: Մասնավոր կյանքի հետ կապված խնդիրները գնալով կաճեն:

Քննադատական մտածողության առաջադրանք 1.

Երբ կարդաք հաջորդ պարբերությունը, պատկերացրեք, որ կառավարությունը պատրաստվում է ստեղծել կենտրոնական համակարգչային տեղեկատվական բազա: Այս բազան կկենտրոնացնի այն ամբողջ տեղեկատվությունը, որը կառավարությունն ունի երկրում ապրող յուրաքանչյուր անհատի մասին: Մտածեք բոլոր հնարավոր առավելությունների և թերությունների մասին: Հետո աշխատեք զույգերով և պատասխանեք հարցերին:

ՀՀ կառավարությունը հարյուրավոր առանձին համակարգիչներ է օգտագործում՝ տեղեկատվությունը հավաքելու և տեղափոխելու համար: Կառավարությունում համակարգիչներն օգտագործվում են ազգային անվտանգության, սոցիալական անվտանգության, առողջապահության և հումանիտար ծառայությունների մատուցման, արդարադատության, աշխատուժի կառավարման, քաղաքային զարգացման պաշտպանության և մի շարք այլ նպատակներով: Սրանցից յուրաքանչյուրի համար ստեղծված է առանձին տեղեկատվական բազա:

Որոշ ուսումնասիրությունների հեղինակներ առաջարկում են, որպեսզի այս առանձին համակարգիչներում պարունակվող տեղեկատվությունը հավաքվի մեկ կենտրոնական բազայում: Մեկ համակարգչում գտնվող տեղեկատվությունը պետք է հասանելի լինի կառավարության բոլոր ստորաբաժանումների համար:

Կառավարության աշխատակիցները կունենան իրենց անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը: Կառավարության ծրագրերն ավելի արդյունավետ կաշխատեն, ավելի շատ մարդկանց կծառայեն և ավելի շատ գումար կխնայեն: Տնտեսության բարելավմանը և գործազրկության կրճատմանն ուղղված կառավարության քաղաքականությունն ավելի շատ տեղեկատվական հիմք կունենա և հաջողության հասնելու առավել մեծ հավանականություն: Համընդհանուր առողջական խնդիրները և համաճարակներն ավելի կարճ ժամանակահատվածում կհաղթահարվեն: Կառավարությունն ավելի արագ կարձագանքի բնական աղետներին, ինչպես, օրինակ, ջրհեղեղի, երկրաշարժի կամ փոթորկի դեպքում: Օրինապահ մարմիններն ավելի հեշտությամբ կպահպանեն նախկինում հանցանք կատարած մարդկանց մասին տեղեկատվություն: Մարդիկ, ովքեր չեն վճարում իրենց հարկերը, ավելի շուտ կպատժվեն: Կենտրոնական տեղեկատվական բազան կառավարությանը կօգնի ավելի արդյունավետ աշխատել մի շարք ուղղություններով:

Բոլոր այս առավելությունները հաշվի առնելով՝ բազմաթիվ մարդիկ մտածում են, որ միասնական տեղեկատվական բազա ստեղծելը լավ գաղափար է: Սակայն մյուսները դեմ են: Նրանք վախենում են, որ այս բազայի ստեղծումը յուրաքանչյուրիս մասնավոր կյանքը վտանգի կենթարկի և բարձրացնում են մի շարք հարցեր.

- Արդյոք ցանկացած նախարարություն կամ ստորաբաժանում իրավունք կունենա՞ օգտագործել մեկ այլ նախարարության կամ ստորաբաժանման տրամադրած տեղեկատվությունը ցանկացած նպատակով:

- Ի՞նչ բովանդակությամբ տեղեկատվություն կարող է պահվել կենտրոնական բազայում:

- Անհատները ինչպե՞ս կարող են իմանալ, թե ի՞նչ կա իրենց անհատական բազաներում:

- Ինչպե՞ս կարող է կառավարությունը կանխել իր իսկ աշխատակիցների կողմից սովյալ տեղեկատվության արտահոսքը կամ անօրինական օգտագործումը:

Ընդդիմադիրները կարծում են, որ կենտրոնական բազայի ստեղծումը կառավարությանը չափազանց շատ լիազորություններ կտա բոլորի կյանքը կառավարելու համար: Այն կարող է սխալ օգտագործման հետևանքով մի շարք վտանգներ ստեղծել: Նրանց կարծիքով՝ այս ծրագիրը պետք է չեղյալ համարել:

Օգտագործեք մտավոր գործիքներ՝ սեփական դիրքորոշումը պաշտպանելու համար

Քննադատական մտածողության առաջադրանք 2. Դերախաղ

Այս դասի ընացքում դուք կմասնակցեք կառավարության նախաձեռնած լսումներին: Դուք կառաջարկեք այլընտրանքային ուղիներ՝ կենտրոնական տեղեկատվական բազայի ստեղծմամբ առաջացած խնդիրների լուծման նպատակով, որոնք վերաբերում են մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի հարցերին: Ձեր դասարանը կբաժանվի հետևյալ խմբերի.

1. Համակարգչային սարքավորումներ արտադրողների ասոցիացիա: Դուք գիտեք, որ կենտրոնական տեղեկատվական բազան կօգնի համակարգիչ արտադրող բիզնեսներին:

2. «Ակտիվ քաղաքացի» ՀԿ-ի անդամներ: Ձեր ՀԿ-ն կողմ է այն բոլոր առաջարկներին, որոնք կնվազեցնեն հարկերը և կբարձրացնեն կառավարության աշխատանքի արդյունավետությունը:

3. Մասնավոր կյանքի իրավունքի պաշտպան քաղաքացիներ

Դուք վստահ եք, որ ստեղծվելիք բազան կխախտի մարդկանց մասնավոր կյանքի իրավունքը:

4. Տեխնոլոգիայի դեմ համախաբված մարդկանց խումբ: Դուք կարծում եք, որ տեխնոլոգիան վտանգավոր է, քանի որ այն չափազանց հզոր է դառնում: Դուք դեմ եք տեխնոլոգիային ընդհանրապես, քանի որ կարծում եք, որ դրա պատճառած վնասներն ավելի շատ են, քան օգուտները:

5. Կառավարության կողմից բազայի օգտագործման գլխավոր կոմիտե: Դուք եք որոշելու՝ ստեղծել տեղեկատվական բազան, թե ոչ: Դուք ցանկանում եք լսել տարբեր տեսակետներ, քանի որ դուք ցանկանում եք ընդունել լավագույն որոշումը: Դուք գիտեք, որ ձեր ընդդիմախոսները անհանգստացած են կառավարության աշխատանքով, բայց նրանք գնահատում են իրենց մասնավոր կյանքն ու ազատությունը:

Առաջին չորս խմբերը պետք է պատրաստեն կենտրոնական տեղեկատվական բազայի ստեղծմանը դեմ կամ կողմ փաստարկներ: Փաստարկներն իրենց մեջ պետք է ներառեն բազայի ստեղծման բոլոր դրական և բացասական կողմերը: Այդ փաստարկները պետք է նաև առաջարկեն, թե ինչպես խմբերը պետք է.

- Պաշտպանեն մարդկանց մասնավոր կյանքը,
- Կառավարությանն անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքելու ուղի առաջարկեն:

Առաջին չորս խմբերը պետք է իրենցից ընտրեն երկու կամ երեք խոսնակներ, որոնք ամբողջությամբ կներկայացնեն իրենց խմբի տեսակետը գլխավոր կոմիտեին: Միաժամանակ, կառավարության կողմից բազայի օգտագործման գլխավոր կոմիտեն պետք է յուրաքանչյուր խմբին հարցեր պատրաստի: Կոմիտեն պետք է իր միջից ընտրի նաև նիստը նախագահողին:

Երբ բոլոր չորս խմբերն արդեն ներկայացրել են իրենց տեսակետները, կոմիտեի անդամներից յուրաքանչյուրը պետք է կողմ կամ դեմ քվեարկի բազայի ստեղծմանը և հիմնավորի իր պատասխանը:

Տնային առաջադրանք

1. Պատկերացրեք, որ խորհրդարանը քննարկում է մի օրենք, որը ստիպում է բոլոր քաղաքացիներին մշտապես իրենց հետ կրել անձնագիր: Յուրաքանչյուրի անձնագիրը համարակալված է: Այդ համարը կօգտագործվի ցանկացած ժամանակ, երբ տվյալ անձը որևէ պաշտոնական ձևաթուղթ լրացնի, ինչպես, օրինակ, հարկերի վճարում, հիվանդանոցում բուժվելու ձևաթուղթ կամ վարորդական իրավունք ստանալու համար անհրաժեշտ ձևաթուղթ: Այդ համարը կօգտագործվի նաև այն ժամանակ, երբ անձին տուգանք նշանակվի կամ նա ձերբակալվի: Ի՞նչ փաստարկներ կբերեք՝ հօգուտ այս նախագծի: Ո՞ւնեք արդյոք հակափաստարկներ: Ձեր կարծիքով՝ որո՞նք են ամենից ուժեղ փաստարկները: Ինչո՞ւ: Շարադրեք ձեր պատասխանները:

2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են անհատները և խմբերը ցանկանում իրենց տեսակետն անպայման հայտնել հանրային լուսններում: Գրավոր պատասխանեք այն խմբերի օրինակով, որոնք ներկայացված էին ձեր դերախաղի լուսններում:

3. Որո՞նք են կառավարության կողմից որոշումներ ընդունելուց առաջ հանրային լուսններ իրականացնելու դրական կողմերը: Որո՞նք են բացասական կողմերը: Արդյոք կառավարական բոլո՞ր որոշումները պետք է կայացվեն լուսններ իրականացնելուց հետո. ինչո՞ւ: Շարադրեք ձեր պատասխանները:



**DEMOCRACY AND HUMAN RIGHTS EDUCATION IN ARMENIA
PROJECT**

FOUNDATIONS OF DEMOCRACY

RESOURCE BOOK FOR SOCIAL STUDIES TEACHERS

YEREVAN 2016

The resource book was developed under “Democracy and Human Rights Education in Armenia” project with the support of UN Democracy Fund.